

ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Գագիկ Տերտերյան

Մեզանում քաղաքական ընտրանու արդյունավետ գործունեությունը ենթադրում է փորձագիտական համարժեք սպասարկում: Մասնավորապես, քաղաքական դեկավարությունը պետք է հնարավորություն ունենա փորձագիտական-հետազոտական հանրությունից մշակումներ ստանալ հետեւյալի վերաբերյալ.

❖ Հայաստանի եւ Հայության պատմության օրինաչափությունները եւ ուրույնությունը («անցյալի իմացություն»):

❖ Ազգային հանրության մտավոր-տնտեսական պոտենցիալը եւ հիմնախնդիրները՝ հաշվի առնելով Հայության մի մասի բազմամշակությունության, տարալեզվության եւ տարադավանության գործոնը:

❖ ՀՀ, ԼՂՀ եւ Զավախքի սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական եւ ներքաղաքական իրավիճակը:

❖ Տարածաշրջանում ռազմաքաղաքական գործընթացների բովանդակությունը եւ ուղղվածությունը:

❖ Գլոբալ քաղաքակրթական, աշխարհաքաղաքական, մակրոտնտեսական եւ սոցիալական գործընթացների տրամաբանությունը եւ միտումները (աշխարհակարգի համարժեք ընկալում):

❖ Ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական եւ այլ ոլորտներուն հնարավոր զարգացումները եւ սցենարները կարծաժամկետ, միջնաժամկետ եւ երկարաժամկետ հեռանկարում («ապագայի իմացություն»):

Նման աշխատանքը ենթադրում է բարձր կազմակերպվածություն եւ համապատասխան փորձագիտական հանրության առկայություն, ինչը հնարավոր է միայն ողջ Հայության ռեսուրսների համախմբմանը, արդի տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների հնարավորությունների կիրառմանը:

Միաժամանակ, փորձագիտական-հետազոտական հանրության արդյունավետ գործունեությունը հնարավոր է միայն այն ժամանակ, երբ ազգային-քաղաքական ընտրանին.

❖ հստակ ձեւակերպված նպատակներ է դնում, որոնց իրագործմանը պետք է ձգտի Հայությունը,

❖ ձեւավորում է մտավոր ռեսուրսների անհրաժեշտ եւ օպտիմալ կազմակերպված «կրիտիկական զանգված»,

❖ ապահովում է հակադարձ դրական կապը փորձագիտական հանրության եւ քաղաքական ընտրանու միջեւ:

Թվարկված խնդիրներից առանձնացնենք հետեւյալները, որոնց, չնայած դրանց հրատապությանը, այսօր, ըստ մեզ, պատշաճ ուշադրություն չի նվիրվում:

Հավանական ռազմաքաղաքական զարգացումների կանխատեսումը. Այս հիմնախնդիրը հատկապես հրատապ է, քանի որ Հայաստանը ներգրավված է տարածաշրջանային եւ գլոբալ բնույթի ռազմաքաղաքական գործընթացներում: Այդպիսիք են.

❖ Միջազգային հանրության կողմից ԼՂՀ կարգավիճակի եւ Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը եւ այս համատեքստում՝ հարաբերություններն Աղրբեջանի ու Թուրքիայի հետ:

❖ Զավախքի հիմնախնդիրը եւ դրա հետ կապված՝ տրանսպորտային հաղորդակցությունների, Վրաստանի եւ Ռուսաստանի բարդ փոխհարաբերությունների հարցերը:

❖ Իրանի առճակատումն Իսրայելի եւ ԱՄՆ-ի հետ, որն անմիջականորեն առնչվում է Հայաստանին:

❖ Թուրքիայի քաղաքական եւ ազգային կողմնորոշումների ռադիկալացումը, քրդական խնդրի ակտուալացումը եւ այս համատեքստում՝ հարաբերություններն այդ երկրի հետ:

Ի հետեւանք տարածաշրջանային եւ գլոբալ քաղաքական գործընթացներում նման ներգրավվածության՝ Հայաստանը խիստ զգայուն է այսօր տեղի ունեցող բազմաբեւեռ աշխարհակարգի ձեւավորման գործընթացի նկատմամբ: Հայտնի է նաև, որ բազմաբեւեռ համակարգը պակաս կոշտ եւ ավելի քիչ վերահսկվող կառուցվածք է, ուստի ավելի է հակված լոկալ հակամարտությունների եւ աշխարհաքաղաքական տեղաշարժերի, այսինքն՝ այս պայմաններում ռիսկերը Հայաստանի համար շատ ավելին են: Այսպիսով, ակնհայտ է, որ արդյունավետ արտաքին քաղաքականություն վարելու համար անհրաժեշտ է ինչպես ճշգրիտ իրավիճակային կանխորոշում, այնպես էլ ապագայում հնարավոր զարգացումների գնահատական, միտումների բացահայտում, կանխատեսում եւ սցենարների կազմում:

Յասարակական հնարավոր փոխակերպումների կանխատեսումը. Գլոբալ քաղաքական իրողությունների փոփոխությանը զուգահեռ՝ արդի աշխարհում խոշոր փոփոխություններ են տեղի ունենում հասարակական ոլորտում: Հիմնականում պերմանենտ ընթացող տեղեկատվական-հաղորդակցական հեղափոխության շնորհիվ փոխվում է միջանձնային, հասարակական, ներազգային եւ միջազգային հարաբերությունների բովանդակությունը:

Այսօր տեղի է ունենում նաեւ ժողովրդավարական հասարակությունների անցում «պոստեմոկրատական» կացութաձեւի, որտեղ նկատվում է պետության դերի նվազման եւ խոշոր բիզնեսի ազդեցության բարձրացման միտում: Որպես այդ գործընթացների հետեւանք՝ ինտերնետի գլոբալացված ցանցային հանրություններում ի հայտ են գալիս ժողովրդավարության նոր, վիրտուալ ձեւեր եւ տեղի է ունենում «վիրտուալ մարդու» (*homo virtualicus*) ձեւավորումը: Այս փոփոխությունները, ըստ որոշ հետազոտողների, կարող են անգամ հեղափոխական ձեւեր ընդունել, որոնց սաղմերն արդեն այսօր նկատում ենք ոչ միայն զարգացող երկրներում, այլեւ Եվրոպայում: Ակնհայտ է, որ տեղի ունեցողը չի կարող եապես չագրել Յայության վրա, առանց աշխարհագրական սահմանափակումների:

Բնականաբար, նման դինամիկ պայմաններում հանրության եւ պետության արդյունավետ կառավարումը հնարավոր է միայն ազգային-հասարակական գիտակցության էվոլյուցիայի եւ փոխակերպման հիմնական ուղղությունների մասին տվյալների գործառմանը:

Հետազոտությունների ճեթոդիկայի վերաբերյալ. Վերոնշյալ բնագավառներում հետազոտությունները ենթադրվում է իրականացնել հետեւյալ կերպ.

❖ Ազգային շահերի համատեքստում վերլուծել այլ առաջատար հետազոտական կենտրոնների կողմից արդեն իրականացված կանխատեսումներն ու սցենարները, որոնք վերաբերում են վերը նշված ոլորտներում ինչպես գլոբալ, այնպես էլ տարածաշրջանային մասշտաբի զարգացումներին: Այս գործառույթները պետք է կատարի հատուկ ընտրված վերլուծաբանների խումբը:

❖ Պատվիրել կանխատեսումային աշխատանքներ փորձագետների սահմանափակ թվով շրջանակի (յուրաքանչյուր բնագավառում ոչ ավելի, քան երկու հոգի), որոնք կընտրվեն նախապես որոշված չափանիշներով: Նման մեթոդը, որը կիրառվում է ռեսուրսները խնայելու նպատակով, պայմանականորեն կարելի է անվանել «Դելֆի ֆոկուս», քանի որ ի

տարբերություն լիարժեք «Ղելփի մեթոդի»՝ մեծ թվով փորձագետների մասնակցություն չի պահանջում: Աշխատանքը կատարում են փորձագետներ Սփյուռքից եւ Հայաստանից՝ առաջատար համաշխարհային հետազոտական կենտրոնների համապատասխան մասնագետների ներգրավմանը:

❖ Ստացված արդյունքների տրամաբանական, համեմատական եւ կոնտենտ-վերլուծություն:

❖ Արդյունքների կոմպլեքս քննարկում՝ օգտագործելով միջդիսցիպ-լինար մոտեցումները եւ «ուղեղային գրոհի» մեթոդները:

❖ Քննարկումների հիման վրա կազմվում են ամփոփիչ փաստաթղթեր, եւ մշակվում է հայեցակարգ հետազոտությունների հաջորդ փուլի իրականացման համար:

❖ Ամփոփիչ փաստաթղթերը եւ դրանց հիման վրա կազմված խորհրդատվություններն ու հետագա հետազոտությունների պլանները ներկայացվում են Հայաստանի եւ Հայության մակարդակով որոշումների կայացման համար պատասխանատու պետական եւ ազգային կառույցների դեկավարներին:

❖ Նյութերի մի մասը հրապարակվում է որպես տարեգիրք եւ լայնորեն տարածվում տեղեկատվական դաշտում (Ելնելով «ապագայի ձեւավորման» հայեցակարգից՝ ապագայի կանխատեսումների մասին տեղեկատվության միջոցով):

ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԱՐԴԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ *Սուլեն Սարյան*

Իսլամական աշխարհում սկիզբ առած վերջին զարգացումները վերստին արդիականացրեցին քաղաքակրթական գործոնի նշանակությունը:

Ժամանակակից աշխարհում քաղաքակրթական ընտրանքի հարցն աստիճանաբար ավելի մեծ սրությամբ է դրվում, ինչն, օրինակ, նշանակեց անցած տարի Եվրոպայի երկրներում արմատական պահպանողական ուժերի՝ ընտրություններում արձանագրած հաջողությունների տեսքով. այդ հաջողություններն եապես պայմանավորված էին Եվրոպայում կրոնական եւ էթնիկ փոքրամասնությունների, հատկապես՝ ներգաղթյալների նկատմամբ նշված ուժերի որդեգրած կոշտ դիրքորոշումներով: Դրան զուգահեռ, սկզբում գերմանիայի վարչապետ Ա.Մերկելը, ապա Ֆրանսիայի նախագահ Ն.Սարկոզին եւ ավելի ուշ Մեծ Բրիտանիայի վարչապետ Դ.Կամերոնը ազդարարեցին տասնամյակներ շարունակ Եվրոպայում քարոզվող բազմամշակութայնության քաղաքականության ձախողման, ինչպես նաև ժողովրդավարական արժեքների պաշտպանության գործում ավելի կոշտ, հետեւողական եւ ակտիվ լինելու մասին: Կարելի է ասել, որ բազմամշակութայնությունը Եվրոպայում արժանացավ նույն ճակատագրին, ինչ «ժողովուրդների բարեկամությունը» ԽՄՀՄ-ում:

Հատկանշական է, որ Ն.Սարկոզին եւ Դ.Կամերոնի հայտարարություններից անմիջապես հետո դրանց արձագանքեց Ռուսաստանի նախագահ Դ.Մեդվեդեվը՝ նշելով, որ Ռուսաստանը դատապարտված է ստեղծել բազմամշակույթ միջավայր, այլապես երկիրը կմասնատվի եւ կնետվի քառուհի մեջ: Այս առումով, փորձագետների շրջանում ներկայումս մտավախություններ կան, որ Եվրոպայում ամենամեծ մահմեդական ազգաբնակչություն ունեցող Ռուսաստանին (շուրջ 20 մլն մարդ) եւս կարող է հասնել իսլամական հեղափոխությունների շղթան:

Նաեւ այս համատեքստում պետք է ընկալել Ռուսաստանի ղեկավարների մոտ Լիբիայի դեմ ռազմական գործողությունների շուրջ առկա տարակարծությունը, ինչը, թերեւս, վկայում է Ռուսաստանի ներսում «արեւմտյան» եւ «արեւելյան» քաղաքակրթությունների կամ աշխարհնեկալունների միջեւ պայքարի մասին: Հավանական է նաեւ, որ Դ.Մեդ-

Վեղեւը խուսափում է քաղաքակրթությունների բախման տերմինաբանությունն օգտագործելուց՝ զգուշանալով, առաջին հերթին, Ռուսաստանում սեփական «խաչակիրների» եւ «ջիհադականների» միջեւ թշնամանքի հնարավոր բռնկումից:

Թետք է նշել, որ միջնադարում Խաչակրաց արշավանքները կարեւոր դեր ունեցան Արեւմուտքի՝ դեպի աշխարհ դուրս գալու կամ բացվելու գործընթացում, նպաստելով Եվրոպացինների՝ իրենց քաղաքակրթական միասնականության եւ ընդհանրական ինքնության գիտակցմանը: Ինքնին պատկերացումը Եվրոպայի, «Եվրոպական աշխարհի» մասին՝ որպես մշակութային եւ տարածքային ամբողջության, ձեւավորվեց հենց Խաչակրաց արշավանքների ընթացքում՝ մահմեդական աշխարհին հակադրվելու արդյունքում:

Այսօր խնդիր է մնում նաև այն, որ Եվրոպայի՝ որպես քաղաքական տարածության, սահմանները հստակեցված չեն: Ընդունված է համարել, որ Եվրոպան գտնվում է ամենուրեք, որտեղ հետեւում են Եվրոպական սկզբունքներին: Յենց դա են Ենթադրում ԵՄ ճարտարապետները՝ որպես արժեքային նախագիծ ամբողջ մարդկության համար:

Սակայն վերջին տասնամյակում խսլամական աշխարհին ու Զինաստանը տվեցին արեւմտյան արժեհամակարգից տարբերվող զարգացման այլ նողելների օրինակներ: Ս.Դանթինգտոնը 1990-ականներին կանխատեսում էր, որ խսլամական եւ չինական (կամ կոնֆուցիական) քաղաքակրթությունները վերելքի ժամանակաշրջան են մտնում: Սակայն եթե Զինաստանն ամեն կերպ խուսափում է քաղաքակրթական գործոնն առաջ տանելուց, ապա խսլամական աշխարհին այն միայն խորացնում է՝ ոչ առանց Արեւմուտքի «օգնության»:

Ահա այս պայմաններում, երբ Գերմանիան իրեն աստիճանաբար ավելի հեռու է պահում գլորալ գործընթացներից՝ կենտրոնանալով սեփական զարգացման խնդիրների վրա, Ֆրանսիան սկսեց ռազմաքաղաքական ինտեգրումը Մեծ Բրիտանիայի հետ՝ վերակենդանացնելով XX դարի սկզբի Անտանտի մասին հիշողությունները: Եվ այս դաշնիքի առաջին թիրախը դարձավ Լիբիան:

Այս առումով կարելի է ասել, որ Արեւմուտքի առաջնորդ ԱՄՆ-ը պարտադրում է Եվրոպացիններին՝ ուժեղացնել իրենց ռազմական քաղաքականությունը: Անկախ Լիբիայում պատերազմի ելքից, ՆԱՏՕ-ի Եվրոպական երկրները պարտադրված են լինելու հաստատել ուղղակի ռազմական հսկողություն Հյուսիսային Աֆրիկայից դեպի Եվրոպա տանող էներգետիկ մայրուղիների նկատմամբ, ինչպես նաև ուժային միջոցներով կանխել մահմեդական աշխարհից զանգվածային ներգաղթը:

Փորձագետները նշում են, որ արաբական աշխարհն ընկղմվում է անընդհատ խռովությունների հորձանուտի մեջ, ինչն, անպայման, հարվածելու է Եվրոպային: Իրոք, արաբական աշխարհում զարգացումներն էլ ավելի սրեցին Եվրոպայում ներգաղթյալների խնդիրը՝ առաջացնելով փախստականների մեջ հոսք դեպի Եվրոպա (տարբեր գնահատականներով՝ օրական հազար հոգի է հատում Եվրոպական երկրների սահմանները Մերձավոր Արեւելքի եւ Յս. Աֆրիկայի երկրներից): Ընդ որում, եթե արաբական նախկին վարչակարգերը դեռ զապում էին ներգաղթը դեպի ԵՄ, ապա այսօր իտալիայի սահմանին ստեղծված իրավիճակը վկայում է, որ Եվրոպան շատ շուտով կանգնելու է իր սահմանները փակելու անհրաժեշտության առաջ: Յատկապես, որ այսօր մայրցամաքն իսլամական աշխարհից սահմանազատելու եւ ներգաղթի դեմն առնելու կոչերը Եվրոպայում շատ արդիական են:

Որոշ մասնագետներ նշում են, որ այն, ինչ կատարվում է այսօր իսլամական աշխարհում, իսկապես տեղավորվում է արեւմտյան քաղաքակրթության դեպի մահմեդական աշխարհ արշավանքի գաղափարի մեջ:

Իր հերթին Արեւմուտքը, իսլամական աշխարհի օրինակով՝ դարձնելով գլոբալ քաղաքական գործնաբաններն անկանխատեսելի, ծեռք է բերում առավելություն այլ քաղաքակրթությունների նկատմամբ:

Այս առումով անկանխատեսելիությունը դառնում է ժամանակակից աշխարհի զարգացումների հիմնական բնութագիրը: Աշխարհակարգի զգնաժամը շարունակաբար ուժգնանում է, եւ այլեւս անիմաստ է քացատրել այն «սառը պատերազմի» ժամանակաշրջանի մտապատճեններով: Բացարձակապես անորոշ է, թե ինչ է ծնվելու իսլամական աշխարհում տեղի ունեցող ցնցումների արդյունքում: Եթե 1989–1991թթ. Արեւելյան Եվրոպայում եւ նախկին ԽՍՀՄ-ում տեղի ունեցած հեղափոխությունների արդյունքում ծնվեցին պետություններ, որոնք ի սկզբանե ուզում էին դառնալ Եվրոպական տիպի ժամանակակից համակարգեր, ապա ոչ մեկին պարզ չէ, թե ինչ են ուզում Լիբիայի ապստամբները կամ Սիրիայի ցուցարարները:

Այսօր Արեւմուտքում այնքան էլ չեն ժխտում, որ իսլամը պայքարի մեջ է արեւմտյան քաղաքակրթության հետ, սակայն խուսափում են այն խաչակրաց արշավանք որակել: Այսպես, Եվրոպացի փորձագետները նշում են, որ խաչակրաց արշավանքների հետ Լիբիայի ռազմական գործողությունները կապ չունեն, քանի որ դրանք սկսելու համար ՄԱԿ-ին դիմել էր Արաբական պետությունների լիգան, իսկ օրային գրոհներին մասնակցում է Կատարի եւ ԱՄԷ-ի օդուժը:

Դրանով վերջին զարգացումները կրկին ի ցույց հանեցին

իսլամական աշխարհի պառակտվածությունը: Այն պայմաններում, երբ Լիբիայում իրար դեմ կռվում են մահմեդականները, իսկ արաբական երկրները հավանություն են տալիս Տրիպոլիի կառավարության դեմ ռազմական գործողություններին, միեւնույն ժամանակ Սաուդյան Արաբիայի գործերը մտնում են Բահրեյն եւ գնդակահարում բողոքող շիա ցուցարարներին, իսլամական միասնության մասին խոսակցությունները լուրջ չեն ընկալվում: Այս առումով, արաբական-մահմեդական աշխարհի ներսում ընթացող պայքարը գուցե ավելի մեծ կարեւորություն ունենա աշխարհի զարգացման համար, քան մահմեդական աշխարհի եւ Արեւմուտքի միջեւ բախումը:

Իսլամական աշխարհը զգալիորեն բուլանում է ներսից: Եթե Լիբիայի դեպքերը բոլորի աչքի առաջ են ծավալվում, ապա Բահրեյնում սուսնիների եւ շիաների բախումների եւ այնտեղ սառւյան գործերի միջամտության մասին այնքան էլ չբարձրածայնվեց: Կարելի է ասել, որ Բահրեյնում ընթանում է պայքար Սաուդյան Արաբիայի եւ Իրանի միջեւ, որոնք հանդիսանում են իսլամի երկու խոշոր ուղղությունների՝ սուսնիզմի եւ շիիզմի քաղաքական եւ հոգեւոր կենտրոնները: Յետաքրքրական է, որ նրանց դեմ ուղղակի գործողություններ ձեռնարկելուց Արեւմուտքը դեռ ձեռնպահ է մնում, թեև որոշ փորձագետներ պնդում են, որ վերջին ամիսների զարգացումները, ներառյալ լիբիական պատերազմը, միայն նախապատրաստում են Արեւմուտքի հարվածներն այդ կենտրոններին: Դրանից հետո կանխատեսվում է, որ հիմնական թիրախ դառնալու է Պակիստանը՝ որպես Չինաստանի դաշնակից եւ միակ իսլամական միջուկային տերություն: Իսկ վերջում պետք է որոշվի Եվրոպայի եւ Մեծ Մերձավոր Արեւելքի միջեւ ընկած Թուրքիայի ճակատագիրը, որը 90 տարի առաջ «կոնսերվացվեց» քենալական շարժման միջոցով:

Յենց Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանն այս տարվա փետրվարին Գերմանիա կատարած այցի ժամանակ հակադարձելով Ա.Մերկելին՝ հնչեցրեց քաղաքակրթական եւ էքնիկական խնդիրներ. նա կոչ արեց Գերմանիայում բնակվող թուրքերեն, հետո միայն գերմաներեն, կամ էլ վերադառնալ հարենիք: Ավելին, նա խոստացավ բաժանել Գերմանիայում բնակվող երեք միլիոն թուրքերին «կապույտ քարտեր», որոնցով նրանք համարվելու են Թուրքիայի Յանրապետության պաշտպանության տակ գտնվող քաղաքացիներ:

Սակայն պետք է նշել, որ մահմեդական համերաշխությունն, ի տարբերություն միասնական իսլամական աշխարհի, իսկապես քաղաքական

իրողություն է: Մահմեդականները սուր կերպով են ընկալում, երբ իրենց դեմ սկսվում են թշնամական գործողություններ, ինչպես, օրինակ՝ ամերիկյան բողոքական քահանայի կողմից Ռուբանի այրման դեպքում: Այս առումով, իսլամը միակ կենսունակ գաղափարախոսությունն է Միջերկրական ծովից մինչեւ Չինաստանի սահմաններ ընկած տարածքում:

Եվ արաբական աշխարհի ներկայիս գործընթացներն ակնհայտորեն ուղղված են իսլամական քաղաքակրթության էական թուլացմանը: Այսօր Մեծ Մերձավոր Արեւելքում տարվում է պայքար ինչպես ռեսուրսների, այնպես էլ արժեքների համար: Փորձագետների կարծիքով, քառոր Մեծ Մերձավոր Արեւելքում նպաստելու է նրա բնակչության քաղաքական, կրոնական եւ մշակութային սպասումների լիակատար ձախողմանը: Դրանով իսլամը կդադարի լինել փրկության օղակ այդ զանգվածների համար:

Ինչ վերաբերում է Արեւմուտքին, ապա այստեղ եւս տեղի են ունենալու լրջագույն տեղաշարժեր: Իսլամական աշխարհի զարգացումների ազդեցության ներքո եւ ԱՍՍ ճնշմամբ ԵՄ-ը հարկադրված է լինելու գնալ իր քաղաքականության կոշտացմանն ինչպես ներքին կյանքում՝ մահմեդական երկրներից ներգաղթողների նկատմամբ, այնպես էլ արտաքին ոլորտում՝ ներգակիրների պակասի պայմաններում: Նմանապես, Եվրոպան ակտիվացնելու է քայլերը Ռուսաստանի եւ նախկին հետխորհրդային տարածքի նկատմամբ: Դրանով ԵՄ-ը դաշնալու է ուժային կենտրոն, որին Միացյալ Նահանգները վստահելու է մասնակցություն հետխորհրդային տարածքի եւ Հյուսիսային Աֆրիկայի խնդիրների կարգավորմանը: Ֆրանկո-բրիտանական ռազմական դաշինքը դրան ուղղված առաջին քայլն էր, որին պետք է հաջորդի Գերմանիայի տրանսֆորմացումն ավելի ակտիվ տերության կարգավիճակի, դերակատարում, որին ներկայիս գերմանական քաղաքական դասը դեռ դիմադրում է:

Այսպիսով, մենք ականատես ենք համաշխարհային քաղաքականության օրակարգի փոփոխության միտումների, որտեղ արժեքային, քաղաքակրթական գործունները նղվում են առաջնային պլան: Իսկ դա պահանջում է ժամանակակից աշխարհի պետություններից եւ ժողովուրդներից արժեհամակարգի դերակատարության եւ նշանակության լուրջ վերանայում եւ դրա դիտարկում որպես պետական եւ ազգային անվտանգության առանցքային քաղադրիչ:

«ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԸ» ԹՈՒՐՔԻԱՅՈՒ Հայկ Գաբրիելյան

Ակնհայտ է, որ արաբական աշխարհում գրանցված վերջին զարգացումները մեծապես ոգեւորել են Թուրքիայի, ինչպես նաև Սիրիայի, Իրաքի ու Իրանի քրդերին: Մարմարա ծովի Ինդասը կղզում ցնահ բանտարկություն կրող, Քրդստանի աշխատավորական կուսակցության (PKK) հիմնադիր Աբդուլա Օջալանը փետրվարի սկզբին իր փաստաբանների միջոցով Թուրքիայի քրդերին կոչ արեց Դիարբեքիրը վերածել Կահիրեի Թահրիր հրապարակի. «Եթե քրդերը Դիարբեքիրում փողոց դուրս գան եւ օրերով տուն չվերադառնան, ապա իշխող Արդարություն եւ զարգացում կուսակցությունը (ԱԶԿ)` հանձին վարչապետ Էրդողանի, այլ ելք չի ունենա, քան նորանոր առաջարկներով հանդես գալը: Չենց այդ ժամանակ էլ կգա խաղաղությունը»:

Օջալանի կոչը լայն արձագանք գտավ քրդերի շրջանում, որոնք անմիջապես գործի անցան: Դիարբեքիրում մի շարք բախումներ տեղի ունեցան, ձերբակալվեցին հարյուրավոր քուրդ ցուցարարներ: Նույն պատկերը գրանցվեց Երկրի հարավարեւելյան Հարքարի նահանգի Յուքսեքովա շրջանում, ուր տեղի ունեցած բախումների արդյունքում վիրավորվեցին ու ձերբակալվեցին բազմաթիվ քրդեր: Ստամբուլում քրդերը մի շարք պայթյուններ իրականացրին՝ «մոլոտովյան կոկտեյլներ» ու ձայնային ռումբեր նետելով ԱԶԿ-ի գրասենյակների վրա: Ընդհանուր առմամբ, մեկ շաբաթվա ընթացքում Ստամբուլում այրվեց 250 ավտոմեքենա:

Հարկ է նշել, որ այս ընթացքում Էրդողանին անհանգստացնում էր նաեւ այն, որ թուրք զինվորականները նույնպես կարող են ոգեւորվել արաբական աշխարհի զարգացումներով եւ ռազմական հեղաշրջման փորձ ձեռնարկել: Դրա համար էլ պատահական չէր, որ փետրվարի 11-ին Ստամբուլի 10-րդ ծանր հանցավորությունների դատարանը վճռեց ձերբակալել «Բայոզ» («Կռան») ռազմական հեղաշրջման գործով 196 կաւկածյալներից 163 զինվորականի, այդ թվում նաեւ ռազմածովային ուժերի նախկին հրամանատար, ծովակալ Օզդեն Օրնեքին, ռազմաօդային ուժերի նախկին հրամանատար, գեներալ Իբրահիմ Ֆըրթընային եւ Ստամբուլում տեղակայված 1-ին դաշտային բանակի նախկին հրամանատար, գեներալ Զեքին Դողանին: Ընդ որում, նրանցից 133-ը ձերբակալվեցին հենց դատարանի դահլիճում, իսկ դատական նիստին չմասնակցած մնացած 30-ը՝ ավելի ուշ:

Փետրվարի 15-ին լրացավ Օջալանի ձերբակալման 12-րդ տարին։ Դեռևս 2010 թվականի նոյեմբերին Օջալանը հայտարարել էր, որ ինչպես ապրիլի 24-ն է հայերի համար, այնպես էլ փետրվարի 15-ը պետք է լինի քրդերի համար։ Սակայն դա ասելով՝ Օջալանը նկատի է ունեցել ոչ թե 1999 թվականի փետրվարի 15-ին իր ձերբակալությունը, այլ՝ 1925 թվականի փետրվարի 15-ին քրդական ապստամբության ղեկավար, շեյխ Սայիդի ձերբակալությունը, ինչից հետո սկսվեց քուրդ ժողովրդին ցեղասպանության ենթարկելու գործընթացը։ «Ինձ ձերբակալեցին փետրվարի 15-ին, ինչպես որ այն ժամանակ շեյխ Սայիդին։ Հետաքրքիր է, որ ինձ մահվան դատապարտեցին հունիսի 29-ին¹, այսինքն՝ հենց այն օրը, երբ մահապատժի ենթարկեցին շեյխ Սայիդին»։

Մարտի վերջին Օջալանը հայտարարեց, որ Թուրքիան 30 տարի շարունակ իր միլիոնանոց բանակով ցեղասպանության է ենթարկում քուրդ ժողովրդին։ «Հենց դրա համար ել ես պարտիզանական պատերազմ ձեռնարկեցի, ինչը խիստ անհրաժեշտ էր, քանի որ մինչ այդ օրական սպանվում էր 1500 մարդ²։»

Ս.թ. փետրվարի վերջին PKK-ն հայտարարեց նախորդ տարվա օգոստոսի 13-ին կնքված եւ նոյեմբերի 1-ին երկարաձգված զինադադարի միակողմանի խախտման մասին, ինչը պատճառաբանվեց թուրքական կառավարության վարած քաղաքականությամբ։ «Զինադադարի կնքմանը մենք աշխատեցինք այնպիսի մթնոլորտ ստեղծել, որ ԱԶԿ-ն քրդերի հետ երկխոսությունից անցում կատարի գործուն քայլերի, սակայն երդողանի կառավարությունն ավելի քան 6.5 ամիսների ընթացքում քրդական հարցի կարգավորման ուղղությամբ որեւէ լուրջ քայլ չձեռնարկեց»։

Թուրքական մի շարք փորձագետներ անմիջապես հայտարարեցին, որ զինադադարի խախտմամբ PKK-ն ձգտում է հունիսի 12-ին կայանալիք խորհրդարանական ընտրություններից առաջ երկրում ապակայունացնել իրավիճակը եւ դրանով իսկ սասանել ԱԶԿ-ի դիրքերը։ Թուրքական հատուկ ծառայություններն էլ իրենց հերթին հայտարարեցին, որ ձեռք են գցել այդ մասին վկայող մի շարք փաստաթղթեր։ Զպետք է նոռանալ, որ ներկայումս երդողանի գերխնդիրն է համարվում երկիրը, առանց լուրջ ցնցումների, դեպի խորհրդարանական ընտրություններ առաջնորդելը, քանի որ հակառակ դեպքում նրա եւ ԱԶԿ-ի վարկանիշն անկում կապրի։

Զինադադարի խախտումից հետո PKK-ն անցավ գործի։ մարտի 25-ին Դիարեքիրի նահանգի Շանի շրջանում քուրդ զինյալները նախ նշնականետերով իրետակոնցին միմյանց մոտ գտնվող Անվտանգության ծառայության ու ժամդարմերիայի շենքերը, ապա ինքնաձիգներով գնդակութեցին դրանք։ Ապրիլի 1-ին Թուրքիայի հարավարեւյան հատվածում գտնվող Շաթայի նահանգի Շաասսա շրջանում միմյանց բախվեցին

ժանդարմերիայի ստորաբաժանումն ու Սիրիայից ներթափանցած քուրդ գինյալների ջոկատը: Բախսան արդյունքում զոհվեց 7 քուրդ գինյալ: PKK-ի պատասխանը չուշացավ. Օջալանի ծննդյան 62-րդ տարեդարձի օրը՝ ապրիլի 4-ին, հարավարեւելյան Հաքքարի ու Շըրնաք նահանգներում ականապատ ճանապարհի վրա պայթեցին քուրքական զինվորական ավտոշարասյունները, ինչի արդյունքում վիրավորվեց 7 քուրդ գինվոր ու սպա: Նույն օրը Թունչելիում (Դերսիմ) հեռահար գենքերից գնդակոծվեց ժանդարմերիայի պարեկություն կատարող խումբը:

Պետք է նշել, որ բախսումները չեն պարտվում միայն քրդաբնակ շրջաններով: Օրինակ, ապրիլի 6-ին սեւծովյան Սինոպ նահանգի Բոյաբաթ շրջանում անհայտ անձինք կրակահերթ արձակեցին ոստիկանական մեքենայի ուղղությամբ, ինչի արդյունքում վիրավորվեց 3 ոստիկան: Այս հարձակման պատասխանատվությունն իր վրա վերցրեց PKK-ն՝ նշելով, որ սա մարտի 17-ին Բինգոյլում 4 քուրդ գինյալների սպանության իրենց պատասխան քայլն էր:

Ապրիլի 7-ին Թուրքիայի Գլխավոր շտաբը մոտ 3 ամիս ժամկետով (մինչեւ հուլիսի 1-ը) «ժամանակավոր անվտանգության գոտի» հռչակեց երկրի արեւելյան ու հարավարեւելյան 15 շրջանները, որոնց մեջ մասը բաժին էր ընկնում սահմանամերձ Շըրնաք եւ Հաքքարի նահանգներին: Դրանով արգելվեց քաղաքացիական անձանց մուտքն այդ շրջաններ:

Մարտի 21-ին քրդաբնակ շրջաններում նովորուգի տոնակատարությունները վերածվեցին հակաթուրքական ցույցերի ու բախսումների պատճառ հանդիսացան: Վանում 400.000 քրդեր, «զինված լինելով» Օջալանի ու PKK-ի վիրխարի պաստառներով, առաջ քաշեցին իրենց քաղաքական պահանջները: Բարձրացնելու ու Մարդինում տեղի ունեցած ցույցերին, որոնք հետագայում վերածվեցին նստացույցերի, մասնակցեց համապատասխանաբար 20.000 եւ 30.000 մարդ:

Նույն օրը Շանլըրութֆայում նովորուգի տոնակատարության ժամանակ քրդական խաղաղություն եւ ժողովրդավարություն կուսակցության (ԽԺԿ) նախագահ Սելահաթին Ղեմիրթաշը հայտարարեց, որ «Քրդական հարցը» պետք է լուծվի այս տարի եւ չաետք է սպասել 2012 թվականին: Դրանից 10 օր անց Ղեմիրթաշը քրդական բոլոր նահանգային ու շրջանային կառույցներին կոչ արեց բոյկոտել դպրոցներում պարտադրվող աշակերտական երրումը. «Մենք պարտավոր չենք ընդունել 1934 թվականին մի քուրդ ռասիստի կողմից գրված «զուլում» երդումը: Դրան չմասնակցելու համար որեւէ պատիժ նախատեսված չէ: Պետք է վերջ դնել այդ գուլումին: Սա վերաբերում է նաեւ քուրդ երեխաներին»:

Դիշեցնենք, որ ամեն առավոտ քուրքական դպրոցներում պարտադրվող այդ երդումը սկսվում է «Ես քուրդ եմ, ճիշտ եմ, աշխատասեր եմ,

սկզբունքային եմ...» արտահայտությամբ եւ վերջանում աթաքության «Երջանիկ է նա, ով իրեն թուրք է հանարում» արտահայտությամբ:

Թուրքական իշխանությունների համար եւս մեկ գլխացավանք է այն, որ ավելի քան մեկ տարի է, ինչ քրդական Դեմոկրատական հասարակություն կոնֆրենսը (ԴՀԿ) քրդական բոլոր քաղաքական կուսակցությունների ու կազմակերպությունների աջակցությամբ նախաձեռնել է ստորագրահավաք՝ երկրի արեւելյան ու հարավարեւելյան քրդաբնակ շրջանների դպրոցական համակարգում քրդերենի ներառման համար: Արդեն հավաքվել է 1.5 միլիոն ստորագրություն: Այդ փաստաթուղթը պետք է ներկայացվի թուրքական խորհրդարան ու կրթության նախարարություն: Դրանում նաև պահանջվում է քրդերենը հոչակել Թուրքիայի 2-րդ պաշտոնական լեզու:

Այս ամենին գումարվեցին վերջին գարգացումները Սիրիայում: Մարտի վերջին քրդատանի համայնքների միության (KCK) գործադիր կոմիտեի նախագահ Մուրաք Քարայըլանը սիրիաբնակ քրդերի անունից սիրիական իշխանություններին սպանաց քրդական ապստամբության բարձրացմամբ. «Սիրիայի քրդաբնակ հյուսիս-արեւմուտքում դեռևս հարաբերական անդորր է տիրում, սակայն բացառված չէ, որ հոգումների ալիքը տարածվի ողջ Երկրով մեկ: Սիրիայի կառավարությունը պետք է հնարավորինս շուտ բանակցությունների մեջ նտնի քրդերի հետ: Եթե քրդերն ապստամբություն բարձրացնեն, ապա դա Սիրիայի համար կարող է առավել լուրջ հետեւանքներ ունենալ, քան արաբների խռովությունը: Սիրիան պետք է ճանաչի քրդերի ազգային ինքնությունը եւ բավարարի քուրդ ժողովրդի քաղաքական, մշակութային ու հասարակական պահանջները»:

Սա անմիջապես առաջացրեց Երդողանի խոր մտահոգությունը: Նա անմիջապես զանգահարեց Սիրիայի նախագահ Բաշար Ասադին՝ վերջինիս խորհուրդ տալով բարեփոխումներ անցկացնել եւ ոչ մի գնով հրաժարական չտալ. «Սիրիական զարգացումներն անմիջականորեն իրենց ազդեցությունն են ունենում հարեւան Թուրքիայի վրա: Թուրքիայի համար մեծ վլամագ են ներկայացնում Սիրիայում բնակվող 1.4 միլիոն քրդերը: Եթե Շուք հեռանաք, ապա այդ 1.4 միլիոն քրդերը, Թուրքիայում բնակվող 15 միլիոն քրդերի, Իրանում բնակվող 7 միլիոն քրդերի ու Յուսիսային Իրաքում բնակվող 6 միլիոն քրդերի հետ միասին սուրի կկանգնեն ու առաջ կքաշեն միացյալ անկախ պետության ստեղծման պահանջը»:

Մարտի վերջին թուրքական Hurriyet թերթի սյունակագիր Յուլսուֆ Քանլին իր «Նոր Սայքս-Պիկոյի համաձայնություն» խորագրով հոդվածում նշում էր, որ Թուրքիան խորապես անհանգստացած է նրանից, որ

Օսմանյան կայսրության տիրույթների բաժանման մասին այդ համաձայնագրի կնքումից (1915) շուրջ 100 տարի անց Արեւելքը դարձյալ բոցերի մեջ է, եւ նախորդ հարյուրամյակի նման դարձյալ գլխավոր դերերում են Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան, ԱՄՆ-ը (նախկին Անտանտ): Թուրք լրագրողն ուշադրություն էր իրավիրում այն հանգամանքի վրա, որ Սայքս-Պիկոյի համաձայնագիրը հետագայում հանդիսացավ 1920 թվականի օգոստոսի 10-ին կնքված Սեւրի պայմանագրի հիմքը, ըստ որի՝ Թուրքիայի արեւելքում պետք է ստեղծվեր հայկական պետություն, իսկ հարավ-արեւելքում՝ քրդական պետություն:

Այս հարցում Յուսուֆ Քանլիի հետ համակարծիք է «Turksam» միջազգային հարաբերությունների ու ռազմավարական հետազոտությունների կենտրոնի փորձագետ Եբրահիմ Չելիքը, որը նույնպես հիշել էր 1919-1920 թվականների Փարիզի հաշտության կոնֆերանսը, 1920 թվականի Սան Ռեմոյի կոնֆերանսը եւ վերջապես Սեւրի պայմանագիրը:

Քրդերի ակտիվացումը թուրքական իշխանություններին հարկադրեց երկրում խաղաղություն հաստատելու համար նորից դիմել Օջալանի օգնությանը: Վերջինիս միջնորդությանք ՊKK-ն մինչեւ հունիսի 15-ը երկարաձգեց զինադադարը: Դիշեցնենք, որ հունիսի 12-ին Թուրքիայում կայանալու են խորհրդարանական ընտրություններ, որոնցից շատ քան է կախված:

Օջալանը հերթական անգամ հայտարարեց, որ սա թուրքական կառավարության վերջին հնարավորությունն է: «Անհրաժեշտ է թուրքական իշխանություններին եւս մեկ հնարավորություն ընձեռել «Քրդական հարցի» սահմանադրական-ժողովրդավարական լուծման համար, որովհետեւ սա նրանց վերջին հնարավորությունը կլինի: Եթե «Քրդական հարցը» չլուծվի այդ ճանապարհով, ապա կսկսվի պատերազմական ժամանակաշրջանը: Մենք մի քանի ամիս ժամանակ ենք տալիս թուրքական կառավարությանը, անկախ նրանից՝ խորհրդարանական ընտրություններից հետո այս կառավարությունը կմնա, թե նրան կփոխարինի մեկ այլ կառավարություն»:

Անշուշտ, Օջալանը քաջ գիտակցում է, որ անդորրության պայմաններում ոչինչ կասկածի տակ չի դնում խորհրդարանական ընտրություններում երդողանի գլխավորած ԱԶԿ-ի հաղթանակը: Բնականաբար, Օջալանին ձեռնոտու չէ Թուրքիայում իր եւ քրդերի հանրենա առավել խիստ հայացքներ ունեցող քենալականների (ժողովրդա-հանրապետական կուսակցություն, ԺՀԿ), առավել եւս ազգայնականների (Ազգայնական շարժում կուսակցություն, ԱԾԿ) իշխանության գալը:

Այդ մասին է խոսում այն հանգամանքը, որ երբ նախորդ տարի քրդական ՂՀԿ-ն ներկայացրեց «Ղենոկրատական ինքնակառավարում»

նախագիծը, այն հարուցեց Օջալանի խոր դժգոհությունը. «Այդ նախագիծն, օգուտի փոխարեն, կարող է վճառ պատճառել՝ ընդհարումների տեղիք տալով: Դայտնի չէ, թե ինչ կլինի վաղը: Լիովին հնարավոր է, որ այդ ամենը շրջվի վարչապետի դեմ: Ես դա իմ փորձից եմ ասում: Դենց նմանատիպ քաղաքական ժամանակաշրջանում՝ 1993 թվականի ապրիլի 17-ին, սպանվեց նախագահ Թուրքութ Օզալը: Վաղը կարող է սպանվել նաեւ երդողանը եւ երկրում իրականացվի հեղաշրջում»:

Օջալանի մտավախությունը տեղին է, որ իրադարձությունների գարգացման նմանատիպ սցենարի դեպքում իրեն լավ օրեր չեն սպասվի: Ներկայումս անգամ ազատազրկման մեջ նա գտնվում է հատուկ պայմաններում. թուրքական իշխանությունները նրան չեն հեռացրել քաղաքականությունից եւ ժամանակ առ ժամանակ հնարավորություն են ընձեռում հայտարարություններ հնչեցնել թուրքական լրատվամիջոցներում:

Ներկայումս անգամ նշվում է, որ խորհրդարանական ընտրություններում ԱԶԿ-ի կամխատեսվող հաղթանակից հետո Օջալանին կարող է ներում շնորհվել: Սակայն դա մեծ ռիսկի հետ է կապված, քանի որ ազատության մեջ Օջալանը կարող է դուրս գալ վերահսկողությունից եւ վերադառնալ Թուրքիայի տարածքում քրդական առանձին պետության ստեղծման գաղափարին:

Ինչ վերաբերում է զինադադարին, ապա այն խիստ անհրաժեշտ էր երդողանին ու նրա կուսակցությանը: Սակայն, ինչպես ցույց է տալիս նախկին զինադադարների փորձը, դրանք միշտ էլ փխրուն են եղել:

¹ 2010 թվականի ամռանը Թուրքիայի արդարադատության նախկին նախարար (1999–2002) Հիքմեթ Սամի Թուրքը հայտարարեց, որ այն ժամանակ իրենք Օջալանի հետ միասին պետք է կախաղան բարձրացնեն եւս 60 հոգու, բայց քանի որ դրանով ԵՄ-ին անդամակցել հավակնող Թուրքիան կվերածվեր կախաղանների երկու, ուստիեւ հրաժարվեցին այդ գաղափարից:

² Մարտի 9-ին Լիբիայի նախագահ Սուլամար Քաղաքին թուրքական TRT Turk հեռուստաալիքով հեռարձակվող «Մեր աշխարհի մանրամասները» հաղորդմանը տված հարցագրույցի ժամանակ հայտարարեց. «Արդեն երեք շաբաթ է, ինչ Լիբիայում մարտեր են ընթանում, ինչի համար մեր նկատմամբ ավիապատժամիջոցներ են սահմանվել: Սակայն ո՞չ ԱՄՆ-ը, ո՞չ ԵՄ-ը համարժեք ուշադրություն չեն դարձնում Թուրքիայի վրա, ուր քրդերն իրավունք են պահանջում եւ ցանկանում են ստեղծել իրենց առանձին պետությունը: Թուրքական բանակն արդեն բազում տարիներ պատերազմում է քրդերի դեմ: Ինչո՞ւ Արեւմուտքը նույնպիսի պատժամիջոցներ չի սահմանում Թուրքիայի նկատմամբ»:

ԼԻԲԻԱԿԱՆ ՇԳՆԱԺԱՄԸԸ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՏԱՐԱԾԱՇԽԱՆԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Արտաշես Տեր-Ղարությունյան

Այս տարվա ապրիլի 8-ին Թուրքիայի վարչապետ Ոնչեփ Թայիփ Էրդողանը հայտարարեց, թե իր երկիրը Լիբիայիում հակամարտության դադարեցման ծրագիր է մշակում, որը պետք է ներառի զինադադարի հաստատում, որոշ քաղաքներից Մուամար Քաղաքիին հավատարին զորամիավորումների դուրսբերում, մարդասիրական «միջանցքների» ստեղծում եւ Լիբիայում ժողովրդավարական բարեփոխումների անհապաղ մեկնարկ:

Այն բանից հետո, երբ ապրիլի 3-ին Պենտագոնը հայտարարեց, թե Միացյալ Նահանգների զինուժը դադարեցնում է իր մասնակցությունը լիբիական կամպանիային, ինչից հետո Քաղաքիին հավատարին ուժերը կրկին ստացան ռազմական առավելություն ու նորից սկսեցին շարժվել Արևելք՝ դեպի ապստամբների կենտրոնակայան Բենգազի, Էրդողանի այդ հայտարարությունը կարող է նշանակել, որ Մուամար Քաղաքիի դեմ ձեւավորված միջազգային կուլիցիայի համար հարցի լուծման ռազմական ճանապարհը կարծես թե կորցնում է առաջնահերթությունը:

Լիբիական ճգնաժամի ձեւավորման սկզբնական փուլում իր նախաձեռնողականությամբ հատկապես առանձնանում էր ֆրանսիան, եւ պատահական չէ, որ հակաքադաֆիական առաջին համաժողովը տեղի ունեցավ մարտի 19-ին հենց Փարիզում, որին Թուրքիան անգամ չհրավիրվեց:

Սակայն Էրդողանի վերոհիշյալ հայտարարությունը ոչ միայն նշանակում է, որ Անկարայում առնվազն ունեն Միացյալ Նահանգների աջակցությունը (օրինակ, որպեսզի «միջազգային հանրության» անունից զինադադար առաջարկեն Քաղաքիին), այլև դրանով ցույց է տրվում թուրքական դիվանագիտության նպատակը՝ կարգավորողի դեր ստանձնել տարածաշրջանային կարեւոր հարցի վերաճած լիբիական ճգնաժամում:

Եվ եթե հարցին մոտենանք Օսմանյան կայսրության նախկին տարածքների ու, հետեւաբար, ազդեցության գոտիների տեսանկյունից, պարզ է դառնում, որ գործերը Հյուսիսային Աֆրիկայում կամ Միջերկրական ծովի այդ հատվածում խիստ հետաքրքրում են թուրքական քաղաքականությանը: Անշուշտ, այդ մոտեցումը նորություն չէ վերջին

տարիների բուրքական արտաքին քաղաքականության պարագայում։ Սակայն հարցն այն է, թե արդյոք նիայն Միջերկրականի այդ հատվածում, թե՞ նախկին Օսմանյան կայսրության այլ տարածքներում ու ազդեցության գոտիներում եւս (օրինակ, Իրաք, Սիրիա, Լիբանան, Կովկաս) Միացյալ Նահանգներն աջակցելու է բուրքական այդ քաղաքականությանը։

Իրավիճակային դիտարկում

Լիբիական ճգնաժամի ծագման սկզբնական շրջանում Թուրքիան դեմ էր հատկապես օտարերկրյա ռազմական միջամտությանը։ Հայտնի է ս.թ. փետրվարի 28-ի երդողանի հայտարարությունը, թե «ՆԱՏՕ-ն ոչինչ չունի անելու Լիբիայում»։

Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարության այդ գիծը շարունակվեց նաեւ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հայտնի որոշումից եւ մարտի 19-ի փարիզյան կոնֆերանսից հետո, որի արդյունքում ստեղծվեց հակաքաղաքիական միջազգային կոալիցիա՝ ԱՄՍ, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Կանադայի, Բելգիայի, Իտալիայի, ԽՍՀՄ-ի ու Դանիայի մասնակցությամբ։ Մարտի 20-ին կայացած ՆԱՏՕ-ի խորհրդի նիստին հենց Թուրքիան էր, որ խոչընդոտ հանդիսացավ, որպեսզի Հյուսիսաւլանույան դաշինքը ստանձնի Լիբիայում ոչ թռչքային գոտու ապահովման առաքելությունը։

Անկարայի այդ մոտեցման գլխավոր պատճառը բուրքական շահերի անտեսումն էր։ Ինչպես նշվեց, հակաքաղաքիական կոալիցիայի ձեւավորման սկզբնական շրջանում հենց Փարիզն էր, որ առանձնացավ դիվանագիտական, տեղեկատվական ու ռազմական նախաձեռնողականությամբ։ Արդյունքն այն եղավ, որ ֆրանսիական հետաքրքրությունների տեսանկյունից կարեւոր համարվող Միջերկրականում, 1956թ. Սուեզի ճգնաժամից ի վեր առաջին անգամ, Փարիզը (ի դեպ՝ դարձյալ Լոնդոնի հետ համատեղ¹) ձեռնարկեց սեփական հեղինակությանն ու հետեւաբար՝ քաղաքական ազդեցության ընդլայնմանը միտված ռազմական կամպանիա։ Սակայն Փարիզի այս ակտիվությունը պատճառ դարձավ, որ կրկին տեսանելի դառնան վերջին տարիներին ի հայտ եկած ֆրանս-թուրքական հակասությունները Միջերկրականի ավագանում²։ Անցած շաբաթների ընթացքում լիբիական ճգնաժամում հանդես գալով նման նախաձեռնություններով՝ Ֆրանսիան միաժամանակ ջանք էր գործադրում, որպեսզի հնարավորինս աննկատ լինի Թուրքիայի ներգրավվածությունը գործընթացում։ Պատահական չէ, որ մարտի 21-ին Անկարայում, ընդունելով Մակեդոնիայի պաշտպանության նախարար Զորան Կոնյանովսկուն,

Թուրքիայի պաշտպանության նախարար Վեչդի Գյոնուլը հայտարարեց, թե Լիբիայի դեմ ռազմական կամպանիայում Ֆրանսիայի առաջնորդող դերը դժվար է հասկանալ:

Իրավիճակը, սակայն, փոխվեց մարտի 21-ին կայացած Օբանա–Էրդողան հեռախոսազրույցից հետո, որի ժամանակ, ըստ պաշտոնական հաղորդագրության, քննարկվել էր լիբիական ճգնաժամը:

Երկու օր անց՝ մարտի 23-ին, Թուրքիայի խորհրդարանը ոչ միայն հավանություն տվեց Լիբիայի ծովային շրջափակման համար նախատեսված ՆԱՏՕ-ական ուժերին թուրքական ռազմածովային զորամիավորումների միանալուն, այլև ԱՄՆ-ից հետո Անկարան տարածաշրջան ուղարկեց ամենամեծ ռազմածովային ուժերը՝ չորս ֆրեգատ, մեկ սուզանավ եւ օժանդակ մեկ նավ: Նույն օրն էլ հայտարարությամբ հանդես եկավ Թուրքիայի նախագահ Աբդուլա Գյուլը՝ կոչ անելով Մուսամար Քաղաքիին հրաժարական տալ:

Հատկանշական է, որ Միացյալ Նահանգները դիմեց հենց Թուրքիայի աջակցությանը եւ վերջինիս միջնորդական առաքելության արդյունքում հնարավոր եղավ լիբիական գերությունից ազատ արձակել The New York Times-ի չորս լրագրողների: Խսկ մարտի 22-ին ԱՄՆ պետքարտուղարությունը պաշտոնապես հայտարարեց, թե Լիբիայում Միացյալ Նահանգների շահերը ներկայացնելու է այդ երկրուն թուրքական դեսպանատունը:

Ի վերջո, լիբիական հարցում թուրքական ներգրավվածության ամենալուրջ վկայությունը դարձավ Յուլիսատլանտյան դաշինքի որոշումը՝ իզմիրի մոտ գտնվող թուրքական ռազմակայանում տեղակայել լիբիական ռազմական կամպանիայի համար պատասխանատու ՆԱՏՕ-ի հրամանատարական կետը:

Հետեւություններ

Խիստ ուշագրավ է, որ Թունիսում, Եգիպտոսում տեղի ունեցած եւ Լիբիայում, Եմենում, Սիրիայում ու արաբական այլ երկրներում շարունակվող զարգացումների ֆոնին Թուրքիան միջազգային դիվանագիտական ու տեղեկատվական հարթություններում հանդես եկող, փաստորեն, միակ մահմեդական երկիրն է, որը ձգտում է ազդեցություն ունենալ գործնթացների վրա: Անգամ իր ֆինանսական կարողություններով ու արաբական երկրներում հետևողական կապերով հայտնի Սաուդյան Արաբիան չի կարողանում հանդես գալ նման ձեւով, եւ սաուդական մոտեցումներն ել ավելի հաճախ սահմանափակվում են պաշտպանողական

բնույթի քայլերով: Տարածաշրջանային մահմեդական մյուս տերության՝ Իրանի պարագայում եւս նախաձեռնություններն այնպիսի բնույթ չընդունեցին, ինչպես Թուրքիայի պարագայում: Իրանական իշխանությունները սահմանափակվեցին Եգիպտոսում տեղի ունեցածը կոչելով իսլամական հեղափոխություն եւ դիվանագիտական ու տեղեկատվական որոշակի ճնշում բանեցրին Բահրեյնի սուննի վերնախավի նկատմամբ:

Մյուս կողմից, նման կերպ ներգրավվելով լիբիական ճգնաժամում՝ Անկարան, ըստ էության, նախադեալ է ստեղծում Մերձավոր Արևելքում, Հյուսիսային Աֆրիկայում, ինարավոր է նաև Բալկաններում ու Հարավային Կովկաս-Կենտրոնական Ասիա գծում այդպիսի կամ դրան մոտ իրավիճակների առաջացման պարագայում իր հետագա՝ եթե ոչ ռազմական, ապա դիվանագիտական ու տեղեկատվական միջամտությունների համար:

Օրինակ, վերջին շրջանում Սիրիայում չեն դադարում հակակառավարական հոլովումները, եւ առայժմ միակ երկիրը, որը գործուն միջամտություն է ցուցաբերում սիրիական զարգացումներին, Թուրքիան է: Մարտի վերջից Սիրիայում տեղի ունեցող հոլովումների վերաբերյալ Թուրքիայի վարչապետի ու Սիրիայի նախագահի միջեւ կայացել են շուրջ կես տասնյակ հեռախոսազրույցներ: Մարտի 27-ին Դամասկոսում Բաշար ալ-Ասադն ընդունեց Թուրքիայի հետախուզության պետ Հաքան Ֆիդանին, իսկ օրեր անց այնտեղ էր արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն: Ուշադրություն գրավեց այն, որ սիրիական զարգացումների հետ կապված իր մի հայտարարությունում երդողանք կոչ արեց պաշտոնական Դամասկոսին՝ ընդառաջ գնալ սիրիացիների ցանկություններին եւ ժողովրդագրական բարեփոխումներ ձեռնարկել երկրուն:

Ներկայացվածում, սակայն, պետք է առանձնացնել ԱՄՍ մոտեցումը: Տեսանելի է, որ Վաշինգտոնում որոշակի քայլեր են ձեռնարկում՝ նպաստելու Անկարայի տարածաշրջանային նկրտումներին, եւ լիբիական ճգնաժամում ի հայտ եկած ԱՄՆ-Թուրքիա փոխգործակցությունը կարծես թե դրա վկայությունն է: Այդ առումով նորությունը, թերեւս, այն է, որ Բուշ-կրտսերի նախագահության վերջին շրջանից ժառանգություն մնացած ամերիկա-թուրքական հակասություններին կարող է փոխարինելու գալ նոր իմաստ ստացած համագործակցությունը, քանի որ, օրինակ, Իրաքից հեռացող ԱՄՆ-ի համար Մերձավոր Արևելքում անհրաժեշտ կլինի Թուրքիայի նման գործընկեր: Բայց հարցն այն է, թե ի վիճակի կլինի Թուրքիան ստանձնել նման դերակատարություն:

1 1956թ. հոկտեմբերի 29-ին Մեծ Բրիտանիան՝ Ֆրանսիայի ու Իսրայելի հետ դաշնակցած, ռազմական ակցիա սկսեց Եգիպտոսի դեմ՝ նպատակ ունենալով վերադարձնել Վերահսկողությունը Սուեզի ջրանցքի նկատմամբ, որը, գրեթե մեկ դար (ջրանցքը բացվել է 1869թ.) պատկանելով բրիտանական ու ֆրանսիական բաժնետերերին, 1956թ. հուլիսի 26-ին ազգայնացվեց Եգիպտոսի նախագահ Գամալ Աբդել Նասերի կողմից: Խորհրդային Միության ճնշման արդյունքում Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան ու Իսրայելը, որոնց չպաշտպանեց Միացյալ Նահանգները, ստիպված եղան ընդամենը օրեր անց՝ 1956թ. նոյեմբերի 6-ին, դադարեցնել ռազմական գործողությունները, իսկ 1957թ. մարտին էլ դուրս բերել իրենց ռազմուժը Եգիպտոսի բռնազավթված շրջաններից:

2 Այդ հակասությունները հիմնականում կապված են Ֆրանսիայի նախաձեռնության հետ՝ Միջերկրականի ավազանի երկրներից ստեղծել, այսպես կոչված, Միջերկրածովյան միություն: Թուրքիայում Փարիզի այդ նախաձեռնության մեջ տեսնում են իրենց համար վտանգավոր երկու հանգամանք: Նախ այդ կերպ ֆրանսիացիները փորձում են մեծացնել իրենց աշխարհաքաղաքական ազդեցությունն ավազանում, ինչը վերջին տարիներին փորձում են անել նաեւ թուրքերը: Երկողող, Փարիզը ցանկանում է թուրքիայի առջև վերջնականապես փակել Եվրամիության դրները՝ փոխարենն առաջարկելով Անկարային մասնակցել Միջերկրածովյան ձեւաչափին:

Միջերկրածովյան միության գաղափարն առաջին անգամ առաջ քաշեց Ն.Սարկոզին՝ 2007թ. մայիսին, որպես ավազանի Եվրամիության երկրների ու Միությանը մաս չկազմող պետությունների համագործակցության ձեւաչափ: Միջերկրածովյան հիմնադիր համաժողովը գումարվեց 2008թ. հուլիսին Փարիզում եւ կոչվում էր «Բարսելոնյան գործընթաց». միություն հանուն Միջերկրական ծովի»: Ուշագրավ է, որ Անկարայում որոշ դիտորդներ կարծիք են հայտնում, թե իրականում նշված ճանապարհով թուրքիային ԵՄ-ից դուրս թողնելու գաղափարի հեղինակը Յոռմի պաա Բենեդիկտոս XVI-ն է:

ԻՐԱՆԸ, ՇԻԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՉՈՒՄ ՄԵԼԱԿ Սարուխանյան

Արաբական աշխարհում սկսված հեղափոխական շարժումը մարման միտում դեռևս չի ցուցաբերում, ինչն իր հերթին ակտիվացրել է պայքարը տարածաշրջանային եւ միջազգային տարբեր ուժերի միջեւ։ Մասնավորապես, Իրանի համար սույն գործընթացները հատուկ նշանակություն ունեն նաև շնորհիվ այն բանի, որ դրանցում առանձնահատուկ տեղ ունեն շիական համայնքներն ու Իրանի դաշնակից Սիրիան, որոնց դիրքերի պահպանումն ու ամրապնդումը կարեւոր նշանակություն ունի Թեհրանի համար։

Շիական զարթոնք

Չնայած իսլամական հեղափոխությունից հետո Իրանն ակտիվ մասնակցում է տարածաշրջանի շիական համայնքների շահերի պաշտպանությանը՝ արաբական աշխարհում վերջին շրջանում բարձրացած հեղափոխական ալիքը եւ դրանում շիական համայնքների ակտիվ մասնակցությունը Թեհրանի համար, թերեւս, անսպասելի կարելի է համարել։ Այս մասին է, մասնավորապես, խոսում այն հանգամանքը, որ վերջին տարիներին պաշտոնական Թեհրանը որոշակիորեն կարգավորել էր հակասությունները Մերձավոր Արեւելքի արաբական պետությունների հետ եւ իրաժարվել իսլամական հեղափոխության արտահանման ակտիվ քաղաքականությունից։

Հավանաբար, նման քաղաքական գծի հիմնական պատճառներից կարելի է համարել այն իրադրությունը, որը ձեւավորվել է Իրաքում եւ Աֆղանստանում, որտեղ Իրանը միջնորդավորված կերպով ներգրավված է քաղաքական, ռազմական եւ տնտեսական գործընթացների մեջ։ Այս իրողությունն Իրանից պահանջում էր ռեսուլսների կենտրոնացում աֆղանական եւ իրաքյան ուղղություններում։

Սակայն գործընթացները, որոնք սկսվեցին Յուսիսային Աֆրիկայում հեղափոխական շարժմամբ, Եմենում եւ Բահրեյնում հանգեցրին շիական համայնքների քաղաքական ակտիվության զարթոնքի, որոնց հեռանկարյահին հետեւանքը կարող է լինել այս պետություններում շիական գործոնի դերի անրապնդումը։ Չնայած Իրանն այնքան էլ պատրաստ չէր

նման սցենարի, այնուամենայնիվ, կարելի է նշել, որ առնվազն Բահրեյնում շիական հեղափոխական ալիքը, սկզբից եւեթ ոչ ակտիվ, բայց պաշտպանվել ու հրահրվել է Թեհրանի կողմից:

Իրանը եւ գործընթացները Բահրեյնում

Իրանի անմիջական մասնակցությունը բահրեյնյան իրադարձություններին սահմանափակված էր նրանով, որ Բահրեյնի իշխանություններն Իրանի քաղաքացիների մուտքը եւ ներգրավածությունը երկրի տնտեսական կյանքում խիստ սահմանափակել են իսլամական հեղափոխությունից հետո: Արդյունքում՝ իրանական ներդրումներ Բահրեյնում գրեթե չկան, ինչպես նաև երկրում իրանական համայնք գրեթե չկա, ինչն իր հերթին սահմանափակում է Թեհրանի հնարավորությունները՝ ներգրավվել բահրեյնյան կյանքին եւ անմիջականորեն աջակցել տեղի շիա համայնքին:

Սակայն Բահրեյնում սկսված հակաիշխանական շարժումը ցույց տվեց, որ շիական համայնքը որոշակիորեն կազմակերպված է եւ ուղղորդվում է արտաքին ուժերի կողմից. այլ կերպ հնարավոր չէր բացատրել հանրահավաքների բարձր պատրաստվածությունը եւ ընդդիմադիրների կազմակերպվածությունը: Մարտի ընթացքում Բահրեյնի անվտանգության ուժերի կողմից իրականացված ձերբակալությունները բացահայտեցին այն մեխանիզմները, որոնցով Իրանը կարողացել է ներգրավվել բահրեյնյան զարգացումներում: Պարզվեց, որ դա իրականացվել է Թեհրանի լիբանանյան դաշնակից «Յիզբալլահի» միջոցով, որը շիական- արաբական կազմակերպություն է եւ կարողացել է թափանցել Բահրեյն էժան աշխատուժի, մասնագետների եւ ներդրողների տեսքով: Բահրեյնում անկարգությունների հրահրման եւ հեղափոխական ալիքի կառավարման կասկածանքով ձերբակալվածների մի մասը, պարզվեց, ինչ «Յիզբալլահի» անդամներ եւ Լիբանանի քաղաքացիներ էին:

Սակայն ամենահետաքրքիրն այս երեւություն այն էր, թե ինչպես էին լիբանանյան շիաները կարողացել թափանցել Բահրեյն. որպեսզի տեղի իշխանությունները չկասկածեն «Յիզբալլահի» հետ նրանց առնչության վերաբերյալ, նրանք, օգտագործելով իրենց կապերը Լիբանանի միգրացիոն ծառայության հետ, իրենց անձնագրերում արար քրիստոնյայի նշում էին ստացել եւ ժամանել Բահրեյն որպես քրիստոնյաներ՝ որանով իսկ խուսափելով վերահսկողությունից եւ ստուգումներից:

Ընդհանուր առմամբ, բահրեյնյան հատուկ ծառայությունների կողմից ձերբակալվել եւ երկրից վտարվել է 200 լիբանանյան քաղաքացի, որոնք «քրիստոնեական անձնագրերով» աշխատում էին երկրում: Լիբանանի նախկին վարչապետ Ս. Զարիրի Բահրեյն կատարած այցի ժամա-

նակ պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ Լիբանանի մնացած քաղաքացիներին (մոտ 5000 հոգի) բահրեյնյան իշխանությունները չեն վտարի: «Դիզբալլահի» անդամների վտարումից հետո քաղաքական ակտիվությունը Բահրեյնում նվազեց: Մարտի 27-ին Բահրեյնի ռազմածովային ուժերը հայտնաբերեցին եւ ձերբակալեցին ԱՍԵ-ից Բահրեյն ժամանող բեռնատար մի նավ, որում հայտնաբերվեց հսկայական քանակությամբ զենք, իհմնականում՝ ինքնաձիգեր, որոնք, ինչպես ցույց տվեց բեռների թղթավարության քննությունը, ուղարկվել էին Իրանից (հավանաբար, փողոցային կրիվներում օգտագործելու նպատակով):

Փաստորեն, սառւյան ռազմական ուժերի օգտագործմամբ Բահրեյնի իշխանությունները կարողացան ճնշել հեղափոխական ալիքը երկրում, ինչը կարելի է Իրանի եւ «Դիզբալլահի» պարտությունը համարել: Սակայն, մեր կարծիքով, միայն կարճաժամկետ կտրվածքով: Խնդիրն այն է, որ Բահրեյնում, որի մոտ 600 հազար բնակչության 70 տոկոսը շիաներ են, չլուծվեց քաղաքացիական ճգնաժամի կարեւորագույն՝ քաղաքական եւ տնտեսական բարեփոխումների հարցը: Դրաժմարվելով բարեփոխումների մասին հասարակական բողոքի սկզբում տված խոստումից՝ Բահրեյնի իշխանությունները կամա թե ակամա շիական համայնքին թողեցին իրադրության փոփոխության միայն մեկ ճանապարհ՝ հեղափոխությունը, ինչի փորձեր մոտակա տարիներին անպայման կլինեն:

Իրաք

Հյուսիսային Աֆրիկայի իրադարձությունների արձագանքը հասավ նաեւ Իրաք, որտեղ ակտիվացավ քաղաքական պայքարը: Հաշվի առնելով այն, որ հակակառավարական բողոքներն Իրաքում կարող են ստեղծել նոր իրավիճակ, Իրանը եւ նրա իրաքյան դաշնակիցները որոշեցին ոչ թե պայքարել ժողովրդական բողոքի ալիքի դեմ, այլ փորձել կառավարել այն: Մարտի 3-ին Իրաքի տարբեր քաղաքներում ընթացող բողոքի ակցիաների պաշտպանման համատեղ հայտարարությամբ հանդես եկան «Ալ-Իրաքիա» խորհրդարանական խմբակցության ղեկավար Ա.Ալաուին եւ ծայրահեղական շիա գործիչ Մ. Աս-Սադը, որոնք անմիջականորեն ստանում են Թեհրանի աջակցությունը: Նրանք պահանջեցին և Ալ-Մալիքիի կառավարությունից կատարել լուրջ փոփոխություններ՝ իհմնված ժողովրդի պահանջի վրա: Արդեն մարտի 7-ին նոր հումկու բողոքի ալիք բարձրացավ Բաղդադում, որն ընթանում էր «Մալիքին խարերա է» կարգախոսով: Մարտի 11-ին «Ցասման օրի» շրջանակներում հանրահավաքներ կազմակերպվեցին իրաքյան 8 քաղաքներում:

Ընդհանուր առմամբ, չնայած քողոքների արդյունքում իրաքյան կառավարությունը չկորցրեց իր մանդատը, սակայն թվով 8 քաղաքապետեր իրաժարական տվեցին, ինչի արդյունքում երկրում սկսվել է լուրջ պայքար ինքնակառավարման մարմինների նոր դեկավարների պաշտոնների վերահսկման նպատակով:

Դատելով իրանական մամուլի իրապարակումներից եւ իրանական գործիչների հայտարարություններից՝ Թեհրանն այսօր հետաքրքրված է հենց նման զարգացմամբ, քանի որ Իրանի համար իրաքյան կառավարության տապալումը լուրջ վտանգ կարող է ներկայացնել: Այստեղ առաջին հերթին պետք է նկատի ունենալ այն, որ կառավարության տապալումը կարող է բերել նոր քաղաքացիական պատերազմի, ինչի արդյունքում Միացյալ Նահանգները կարող են հետաձգել զորքերի դուրսբերումն Իրաքից, ինչին Իրանը քավական երկար ժամանակ է սպասում:

Իրաքյան նոր ճգնաժամը լուրջ վտանգ է ներկայացնում նաեւ Թուրքիայի համար: Թերեւս, դրանով կարելի է բացատրել մարտի 28-29-ին Թուրքիայի վարչապետ Էրդողանի պաշտոնական այցն Իրաք, որի ընթացքում նա աջակցություն հայտնեց իրաքյան կառավարությանը՝ խոստանալով թուրք-իրաքյան ապրանքաշրջանառությունը ներկայիս 7,4 մլրդ ԱՄՆ դոլարից հասցնել 10 մլրդ-ի, իսկ հետո՝ 20 մլրդ-ի: Ի դեպ, խիստ կարեւոր քայլ Էրդողանը կատարեց Իրաքի ամենաազդեցիկ շիական համայնքի նկատմամբ. Նա այցելեց շիական Էն-Խաջաֆում գտնվող սուրբ իմամ Ալիի դամբարան եւ աղորեց տեղի շիական մզկիթում, ինչը միջազգային մամուլում լայն մեկնաբանություններ ստացավ, քանի որ Էրդողանն առաջին սուննի առաջնորդն էր, որ նման բան արեց: Շիական համայնքի հոգեւոր առաջնորդ Ա. Աս-Սխատանիի հետ հանդիպմանը նա իսլամական համախմբման կոչ արեց:

Իհարկե, կարելի է ենթադրել, որ Էրդողանի քայլն ուղղված էր իսլամական աշխարհի առաջնորդի դերն գրադեցնելու Թուրքիայի ձգտումն ամրապնդելուն, սակայն ավելի հավանական է, որ Անկարան փորձում է այդ թվում նաեւ Իրանի հետ համագործակցելով ամրապնդել ներկայումս Իրաքում ձեւավորված ստատուս-քվոն, որը հնարավոր է դարձել հենց շիաների քաղաքական դիրքորոշման շնորհիվ:

Լիբանան եւ Սիրիա

Իրանի համար կարեւոր նշանակություն ունեն զարգացումները Լիբանանում եւ Սիրիայում: Իրանի դաշնակից «Յիզբալլահի» շնորհիվ Լիբանանում վարչապետի պաշտոնը ստանձնած Ն.Միկատիի կառավարության դիրքերը երկրում ամուր չի կարելի համարել՝ հաշվի առնելով

այն, որ թե՝ «Հիգբալլահը» եւ թե՝ Միկատիին աջակցող Սիրիան բավական բարդ ժամանակներ են ապրում:

Լիբանանում ավելի է ակտիվանում նախկին վարչապետ Ս. Հարիրին, որին հաջողվեց Բեյրութում եւ լիբանանյան Տրիպոլիում (Միկատիի ծննդավայրում) բազմահազարանոց հանրահավաքներ անցկացնել՝ պահանջելով տնտեսական քաղաքականության փոփոխություն: «Հիգբալլահի» պատասխանն ընդդեմ ամերիկյան աջակցությամբ գործող Ս. Հարիրիի հեղինակության ածի՝ բավական սահմանափակվել է, քանի որ, ինչպես վկայում են նիշազգային աղբյուրները, Վաշինգտոնին հաջողվել է կտրել Իրանից «Հիգբալլահին» ուղղվող ֆինանսական ուղիները: ԱՄՆ ճնշմանը լիբանանյան իշխանությունները փակել են Լիբանանա-կանադական բանկը, որը Իրանից տարեկան մի քանի միլիարդ ԱՄՆ դոլար էր փոխանցում «Հիգբալլահի» հաշիվներին:

Միեւնույն ժամանակ, Սիրիան սահմանափակել է իր մասնակցությունը լիբանանյան գործերին, քանի որ սիրիական իշխանությունները ստիպված են հաղթահարել այն բարդ իրադրությունը, որը ձեւավորվել է սեփական երկրում: Սիրիայում ածող սուննի խւամիստական շարժումը եւ քրդական գործոնը լուրջ վտանգ են ներկայացնում թե՝ սիրիական վարչակազմի, թե՝ Իրանի համար: Սիրիայի գործող վարչակարգի պահպանան մեջ շահագրգռված է նաև Թուրքիան, որին երկրորդ կիսանկախ Քրդստանի ձեւավորումն իր սահմանների մոտ, հասկանալիորեն, ձեռնտու չէ:

Ամփոփում

Կարելի է նշել, որ Մերձավոր Արեւելքի շիական համայնքները, որոնք տասնամյակներ շարունակ ստացել են Իրանի աջակցությունը, արաբական աշխարհում վերջերս տեղ գտած հեղափոխական զարգացումների անմիջական մասնակիցներն են դարձել: Ձեւավորված իրադրության պայմաններում այս համայնքներն ու Իրանը սեփական դիրքերի ամրապնդման լավ հնարավորություն ունեն, սակայն գործընթացները պարունակում են նաև լուրջ մարտահրավերներ: Անկայունության ալիքը կարող է զգալի հարված հասցնել «Հիգբալլահի» դիրքերին, վերջինիս եւ Թերանի դաշնակից Բաշար Ալ-Ասադի իշխանությանը, ինչպես նաև խախտել հավասարակշռությունն Իրանի համար կարեւորագույն նշանակություն ունեցող Իրաքում:

ՍԻՐԻԱՆ ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎՏԱՆԳԻ ԱՌՋԵՎ Արաքս Փաշայան

Արաքական աշխարհում սկսված հեղափոխական շարժումների ալիքը մարտի կեսերից տարածվեց նաև Սիրիայում: Մարտի 15-ին Դամասկոսի հայտնի «Դամիդիյե» շուկայում եւ Օմայան մզկիթին կից տարածքում հավաքվել էին մի քանի հարյուր ցուցարարներ, որոնք վաճառկում էին հակակառավարական արտահայտություններ եւ իշխանություններից պահանջում ազատ արձակել քաղբանտարկյալներին:

Մարտի 18-ին Սիրիայի հարավարեւելյան Դարաա քաղաքում տեղի ունեցավ բազմամարդ հավաք: Նախօրեին այստեղ մի խումբ դպրոցականներ էին ծերբակալվել՝ պատերին հակակառավարական կարգախոսներ փակցնելու պատճառով: Դանրահավաքը տեղի ունեցավ ի պաշտպանություն դպրոցականների: Ցուցարարները հավաքվել էին քաղաքապետարանի շենքի դիմաց, որտեղ վաճառկում էին «Ալլահ, Սիրիա, ազատություն եւ վերջ»՝ պահանջելով սոցիալ-տնտեսական բարեփոխումների անհապաղ անցկացում: Դենց Դարայում առաջին անգամ իշխանությունները կոչտ ուժ կիրառեցին ցուցարարների դեմ: Դետագայում, հակակառավարական ելույթներ տեղի ունեցան Սիրիայի այլ քաղաքներում՝ Դալեպում, Կամիշլիում, Ջոնում, Լաթաքիայում, Բանյասում, Տարտուսում, Իղլիբում, Դեյր Զորում, Դամմայում, Դումայում եւ այլուր: Իշխանությունների եւ ցուցարարների միջեւ բախումների հետեւանքով արդեն զոհվել են հարյուրից ավելի մարդիկ:

Սիրիայի երիտասարդ նախագահ Բաշար Ալ-Ասադն իշխանության եկավ 2000-ին, իոր՝ Դաֆեզ Ալ-Ասադի (1970-2000) մահից հետո՝ ինչ-որ իմաստով ժառանգական դարձնելով արդեն իսկ ավտորիտար իշխանության փոխանցման մեխանիզմը: Բաշարը, ընդիանուր առնամբ, շարունակեց նախորդ նախագահի քաղաքական ուղեգիծը՝ իր դեկավարման առաջին շրջանում որոշակի քաղաքական ազատություններ մտցնելով, ինչը հայտնի է «դամասկոսյան գարուն» անունով: Երկողում զգալիորեն ակտիվացավ հասարակական դիսկուրսը, ինչը, սակայն, կարծ կյանք ունեցավ՝ տեւելով մինչեւ 2001թ. սեպտեմբերը:

Արաքական աշխարհում սկսված հեղափոխական ալիքն ի սկզբանե որոշակի մտահոգություն առաջացրեց Սիրիայի իշխող վերնախավում, թեեւ Բաշար Ալ-Ասադը հավաստիացնում էր, որ Սիրիան գերծ կմնա-

անկայունությունից: Արդյունքում, սակայն, Սիրիան եւս ներքաշվեց հակակառավարական հուզումների մեջ:

Ի տարբերություն արաբական այլ երկրների, Սիրիայի վարչակարգը բավական արագ արձագանքեց ցուցարարների պահանջներին: Ընդառաջ զնալով երկրուն սկսված հակակառավարական հուզումներին՝ երեսուն տոկոսով բարձրացվեց պետական աշխատողների աշխատավարձը, բարձրացվեցին թոշակները եւ վերանայվեց հարկային քաղաքականությունը:

Մարտի 30-ին, ելույթ ունենալով խորհրդարանում, Բաշար Ալ-Ասադը համաձայնեց, որ իշխանությունները շատ դեպքերում չեն արդարացրել ժողովրդի հույսերը, ինչը կապված է եղել 2001-ից ի վեր միջազգային հարաբերություններում եւ մասնավորապես Մերձավոր Արեւելքում ստեղծված աշխարհաքաղաքական իրողությունների եւ Սիրիային ուղղված մարտահրավերների հետ: Ալ-Ասադը խոստացավ բարեփոխումներ անցկացնել իրավապահ եւ դատական համակարգերուն, ներդնել բազմակուսակցական համակարգ, մեծացնել լրատվամիջոցների ազատությունը, կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ միջոցառումներ անցկացնել, լուծել նոր աշխատատեղերի հարցը: Միեւնույն ժամանակ, Սիրիայում ստեղծված իրավիճակը համարելով արտաքին դավադրության արդյունք՝ Բաշար Ալ-Ասադը նոր ճեւավորված հանգամանքների ճնշման տակ բարեփոխումների գործընթացի արհեստական արագացումը համարեց անընդունելի եւ վնասակար:

Ապրիլի 3-ին Սիրիայում ճեւավորվեց նոր կառավարություն՝ գյուղատնտեսության նախկին նախարար Աղել Սաֆարի գլխավորությամբ: Սակայն մինչ այդ, մարտի 26-ին, Սիրիայի անկախության տոնի կապակցությամբ (որ նշվում է ապրիլի 17-ին) Բաշար Ալ-Ասադի հրամանով ազատ արձակվեցին 200-250 քաղբանտարկյալներ, ինչը կարելի է համարել նշանակալից իրադարձություն: Ըստ առանձին տեղեկությունների՝ ազատ արձակվածները հիմնականում իսլամիստներ են: Ընդհանրապես, Սիրիայում հաշվում են հազարավոր քաղբանտարկյալներ, որոնք հիմնականում պահպում են Դամասկոսից ոչ հեռու գտնվող Սեյրնայայի քանտում:

Լուրջ զիջում կարելի է համարել նաեւ նախագահի խորհրդական Բուսայնա Շաաբանի հայտարարությունն այն մասին, որ առաջիկայում իշխանությունները կիանեն հասուլ դրության մասին օրենքը, որը գործում է 1963-ից, երբ Սիրիայում իշխանության եկավ «Բաաս» կուսակցությունը: Արտակարգ դրությունը վերացնելու նպատակով ստեղծվել է հատուկ հանձնաժողով:

Ոչ պակաս շոշափելի էին նաեւ երկրի ամենամեծ էթնիկ փոքրամասնությանը՝ քրդերին արված զիջումները: Քրդերը բնակվում են երկրի

հյուսիս-արեւելքում՝ Դասաքեի շրջանում, կազմում են Սիրիայի բնակչության մոտ տասը տոկոսը: Նրանց մի գգալի հատվածը 1962թ. մարդահամարից հետո դուրս էր մնացել Սիրիայի քաղաքացիների ցուցակից եւ 49 տարի համարվում էր օտարերկրացի: Տասնամյակներ շարունակ քրդերի շրջանում կուտակվել են լուրջ դժգոհություններ՝ կապված նաև ազգային իրավունքների սահմանափակման հետ:

Ընդառաջ գնալով քրդերի շրջանում սկսված հակակառավարական տրամադրություններին՝ ապրիլի 5-ին Բաշար Ալ-Ասադը Դամասկոսում ընդունեց քուրդ ցեղապետերին: Վերջիններս նախագահին փոխանցեցին իրենց պահանջները, որոնցում առաջնային էր քաղաքացիության հարցը: Ըստ սիրիական պաշտոնական լուրերի՝ քրդական վերնախավը կողմ է արտահայտվել երկրի միասնականությանը եւ կայունությանը:

Ի վերջո, ապրիլի 7-ին, Բաշար Ալ-Ասադի հրամանով սկսվեց 300 հազար քրդերի քաղաքացիություն շնորհելու գործընթացը: Բացի այդ, Դասաքեի շրջանի քրդական բնակչությանն իշխանություններն ընդառաջեցին՝ սուրսիդավորելով ջրի հարկի մի մասը՝ չեղյալ համարելով հիմնականում ոռոգման ջրի օգտագործումից 1997-ից կուտակված հսկայածավալ հարկերը:

Նախագահի քայլերն ուղղված էին թուլացնելու քրդերի շրջանում նկատվող լարվածությունը: Միեւնույն ժամանակ, իշխանությունները գիտակցում են, որ քրդական գործոնը նույնպես կարող է ապակայունացնել Սիրիան: Դատկանշական է, որ մարտի վերջերին Սիրիայի քրդաբնակ շրջաններում տեղի են ունեցել բողոքի ակցիաներ, որի մասնակիցները պահանջել էին քաղաքական ազատություններ եւ իրաքի օրինակով՝ Սիրիայի տարածքում ինքնավարության տրամադրում:

Չնայած այն փաստին, որ Սիրիայում հակակառավարական տրամադրությունների ձեւավորման համար կային քաղաքական եւ սոցիալական նախադրյալներ, որոնք, ըստ էության, դրսեւորվեցին «դոմինոյի էֆեկտի» շնորհիվ, շատերը հակված են կարծելու, որ Սիրիայում վարչակարգի փոփոխության եւ երկրում լարվածության հետագա խորացման հարցում էական դերակատարություն ունեն կամ կարող են ունենալ արտաքին ուժերը:

Այս տեսանկյունից, հետաքրքրական է ԱՄՆ պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյրսի՝ սիրիացի գինվորականներին ուղղված կոչը, որը նա արեց մարտի վերջին Խորայել կատարած պաշտոնական այցի ընթացքում: Նա սիրիացի գինվորականներին խորհուրդ տվեց օրինակ վերցնել եգիպտոսի բանակից եւ չիսանգարել ընդդիմարիներին՝ մասնակցել բողոքի ակցիաներին:

Գեյրսի դիտարկման հետ կապված՝ հետաքրքրական են առանձին

փորձագիտական գնահատականներ: Արաբական աշխարհի ամենահեղինակավոր մասնագետներից մեկին՝ Ժիլ Կեպելին ԱՄՆ պաշտպանության նախարարի հայտարարությունը չիմնավորված է թվում այն պարզ պատճառով, որ սիրիական բանակը չի կարող չսատարել իշխանությանը, քանի որ սերտաճած է նրա հետ: Թե՛ իշխանության եւ թե՛ բանակի հիմնական կորիզը ալավիներ են՝ շիական այն փոքրամասնությունը, որը դեկավարում է սուննի մեծամասնությանը: Այնպես որ, հազիվ թե բանակը ցանկանա երկրում առաջ բերել ճգնաժամ, որի հետեւանքով Սիրիայում իշխանությունը կանցնի սուննիներին:

Ընդհանրապես, թե՛ Արեւմուտքից եւ թե՛ Խրայելից Սիրիայի վարչակարգի, մասնավորապես Բաշար Ալ-Ասադի դեմ արված ցանկացած հայտարարություն իրականում ոչ թե թուլացնելու, այլ ամրապնդելու է նրա հեղինակությունը երկրի ներսում՝ հաշվի առնելով արաբական, այդ թվում սիրիական հասարակություններում հակարեական եւ հակարեւմտյան տրամադրությունների բարձր ցուցանիշը:

Սիրիայում ստեղծված իրավիճակը միջազգային առանձին շրջանակներում, այդ թվում՝ Խրայելում եւ Իրանում, լուրջ անհանգստություն է առաջ բերել: Սիրիան Մերձավոր Արեւելքի հանգուցային պետություններից մեկն է՝ առաջին հերթին որպես Խրայելին հակազդող երկիր, նաեւ՝ որպես տարածաշրջանային անվտանգության ամենակարեւոր երաշխավորներից մեկը: Սիրիան շատ կարեւոր օղակ է Իրան-«Ճիզբալլահ» համագործակցության շրթայում: Ոչ պակաս կարեւոր է Սիրիայի դերը «Ճամասին» ցուցաբերվող քաղաքական եւ տարաբնույթ այլ աջակցության հարցում: Այնպես որ, Սիրիայի ներկա՝ բասարական վարչակարգի տապալմամբ Իրանը կկորցնի Մերձավոր Արեւելքում միակ եւ հետեւողական դաշնակցին, կտուժի համագործակցությունը «Ճիզբալլահի» հետ: Խսկ սուննիների իշխանության գալու դեպքում երկվողմ շփումներում կարող է նույնիսկ լարվածություն առաջանալ, եթե հաշվի առնենք սուննի արաբական մի շարք վարչակարգերի հետ Իրանի լարված եւ մրցակցային հարաբերությունները:

Սիրիայում տեղի ունեցած դեպքերի նկատմամբ ոչ պակաս հետաքրքրական է նաեւ խրայելական տեսանկյունը: Եիշտ է, Խրայելի համար մտահոգիչ են Սիրիայի հետ ունեցած ոչ բարեկամական հարաբերությունները, ինչպես նաեւ Իրանի եւ Սիրիայի հարածուն ռազմավարական համագործակցությունը, սակայն Սիրիայի վարչակարգի պահպաննան հարցում Խրայելը, ըստ ամենայնի, պետք է որ շահագրգռված լինի, քանի որ ծանոթ է Ալ-Ասադների քաղաքական մշակույթին:

Խրայելական իշխանությունները պետք է որ արժեւորեն Սիրիայի եւ Խրայելի սահմաններին տիրող կայունությունը, որ շարունակվում է

արդեն մի քանի տասնամյակ: Բացի այդ, Սիրիայի ներկա վարչակարգը, ի տարբերություն Սաղամ Հուսեյնի կամ Մուամար Քաղաֆիի վարչակարգերի, կարելի է բնորոշել որպես որոշակիորեն կանխատեսելի, ինչը նույնպես շահեկան է թե՝ Իսրայելի եւ թե՝ միջազգային այլ ուժային կենտրոնների համար:

Դժվար է ասել, թե ինչպիսին կլինեն Իսրայելի եւ Սիրիայի կամ Սիրիայի եւ Արեւմուտքի հարաբերությունները, եթե իշխանության գան պատերազմի կողմնակիցները կամ սունի խսլամիստները՝ ի դեմս «Մուսուլման եղբայրների»:

Յարկ է նշել, որ ներկա փուլում իրավիճակը Սիրիայում թեև լարված է, սակայն իշխանություններին առայժմ հաջողվում է վերահսկել իրավիճակը: Դժվար է կանխատեսել, թե ինչ ընթացք կստանան դեպքերը հետագայում: Այն, որ իշխանություններն ուժ են կիրառում ցուցարարների դեմ, խոսում է այն մասին, որ նրանք անվստահ են եւ որ իշխանության մեջ որոշակի խուճապ կա: Բացի այդ, սովորական են դարձել իշխանությունների կողմից իրականացվող ձերբակալությունները: Ձերբակալվողների մեջ կան ոչ միայն սովորական ցուցարարներ, այլ նաև հասարակական-քաղաքական ակտիվիստներ, մարդու իրավունքների պաշտպաններ, այդ թվում՝ կանայք: Մարտի 16-ին Դամասկոսի Մարջա հրապարակում ի պաշտպանություն քաղբանտարկյալների անցկացված լուր երթի ժամանակ ձերբակալվեց դամասկոսի հայտնի կին ակտիվիստ Սուհեյր Աստասին, որն ազատ արձակվեց միայն ապրիլի սկզբին: Աստասինների հայտնի ընտանիքից սերող Սուհեյրը Սիրիան համարում է «լռության թագավորություն», որտեղ մարդիկ կաշկանդված են, սիսալ տեսակետներ ունեն իշխանափոխության մասին՝ այն ասոցացնելով քառուի հետ: Ի դեպ, նաև Սուհեյր Աստասին նախաձեռնությամբ փետրվարի 3-ին Դամասկոսի քրիստոնեական Բաբ Թումա թաղամասում կազմակերպված ակցիան՝ ի պաշտպանություն եգիպտացի ցուցարարների, նույնպես գերծ չմնաց բռնությունից:

Միջազգային զանգվածային լրատվամիջոցներով եւ դիվանագիտական խողովակներով տարածվող լուրերի համաձայն՝ ճիշտ է, Սիրիայում ներկա վարչակարգի դիրքերը երերում են, սակայն շատ իրողություններ, ըստ ամենայնի, չափազանցված են եւ ներկայացվում են տեղեկատվական այն գործընթացի համատեքստում, որն ուղղորդված է խթանելու հեղափոխությունները Մերձավոր Արեւելքում եւ որի մեջ «Ալ-Զագիրան» բացարիկ դերակատարություն ունի:

Սակայն չպետք է անտեսել նաև այն հանգանանքը, որ Բաշար Ալ-Ասադը որոշակի հեղինակություն եւ աջակցություն է վայելում հասարակության տարբեր շերտերում: Յակակառավարական հուգումներին

գուգահեռ, մայրաքաղաք Դամասկոսում եւ այլ քաղաքներում տեղի են ունեցել հանրահավաքներ եւ երթեր՝ ի պաշտպանություն նախագահի, որի կողմնակիցները, ի տարբերություն ընդդիմադիրների, վաճարկում են «Ալլահ, Սիրիա, Բաշար եւ Վերջ» կարգախոսը: Բացի այդ, Բաշար Ալ-Ասադը, ի դեմս բանակի եւ հատուկ ծառայությունների, դեռեւս զգալի ռեսուլս ունի պայքարելու հակակառավարական հոլովումների դեմ:

Փաստ է նաեւ, որ սիրիական հասարակության մի զգալի հատվածը, որպես նախադեպ ունենալով մերձավորարեւելյան մի շարք իրողություններ, գիտակցում է կայունության արժեքը: Վերջին ամենամեծ ցնցումը Սիրիան ապրել է 1982թ. Յամնայի հայտնի դեպքերի ընթացքում, երբ իշխանությունները հողին հավասարեցրին «Մուսուլման Եղբայրների» հենակետ դարձած Յամնա քաղաքը՝ արմատախիլ անելով կրոնաքարաքական ընդդիմությանը:

Ամեն պարագայում, Սիրիայում կան լարվածության որոշակիորեն լուրջ եւ վտանգավոր օջախներ, որոնից մեկն այլեւս կապված է սուն-նիական գործոնի ակտիվացման հետ: Երկրի մեծամասնություն համարվող սուննիները, մի քանի տասնամյակ է, ինչ ստիպված են հանդուրժել ալավիների գերիշխանությունը: Բացի այդ, Սիրիայում հասարակության առանձին շերտեր, իիմնականում սուննիական, զգալիորեն կրոնականացված են, ինչը, ըստ եռթյան, իր մեջ ունի քաղաքական ակտիվության լուրջ հենք: Պատահական չէ, որ Յաֆեզ Ալ-Ասադն այդքան հետեւողական պայքար ծավալեց կրոնական ակտիվիստների դեմ՝ ձախողելով Սիրիան իսլամական պետության վերածելու վերջիններիս ծրագրերը:

Նշված խնդիրներին զուգահեռ, Սիրիայում կան նաեւ սոցիալական լուրջ իիմնահարցեր՝ գործազրկություն, ցածր կենսամակարդակ, աղքատություն եւ այլն: Միաժամանակ, արաբական երկրներում, կապված ժողովրդագրական բարձր ցուցանիշների հետ, հասարակության մեծամասնությունը իիմնականում երիտասարդներ են, ինչը նշանակում է, որ ամեն տարի իշխանությունները մեծ թվով նոր աշխատատեղեր պետք է բացեն, որը ոյուրին խնդիր չէ Սիրիայի համար:

Սիրիայի հնարավոր անկայունացումը, ըստ ամենայնի, կընթանա առավել բարդ ու ցավոտ, քանի որ Սիրիան միատարր հասարակություն չէ, ինչպես Եգիպտոսը: Սիրիան էթնիկ եւ դավանական բարդ խճանկար է, եւ ցանկացած անկայունություն կարող է խարիսլել փխրուն հանդուրժողականության մթնոլորտը՝ հասարակության շրջանում ի հայտ բերելով երկիրեղկածություն: Միեւնույն ժամանակ, շատ դժվար է կանխատեսել, թե հնարավոր դրամատիկ սցենարի դեպքում Սիրիայում ինչ ուժեր կարող են իշխանության գալ, քանի որ ներկայում ոչ կրոնական եւ ոչ էլ

աշխարհիկ հատվածում որեւէ կազմակերպված քաղաքական ուժ կամ ինստիտուցիոնալ ընդդիմություն երկրում գոյություն չունի:

Յայաստանի համար Սիրիան զգալի կարեւորություն ունեցող երկիր է: Առհասարակ, արարական աշխարհում տեղի ունեցող գործընթացները Յայաստանի համար չափազանց կարեւոր են՝ հաշվի առնելով նաեւ այն հանգամանքը, որ այնտեղ մեծ քանակությամբ հայեր են ապրում: Սիրիայում մոտ ութսուն հազարամոց բավական կազմակերպված հայկական համայնք կա: Սիրիայի ազգությամբ հայ քաղաքացիներն արդեն իսկ իրենց համերաշխությունն են հայտնել իշխող վարչակարգին՝ նրանում տեսնելով իրենց ապահովության երաշխիքը: Նշենք նաեւ, որ Սիրիայի սահմաններից դուրս սիրիահայերը, ի պաշտպանություն Բաշար Ալ-Ասադի, հանրահավաքներ են կազմակերպել, մասնավորապես, Յայաստանում եւ ֆրանսիայում:

Ընդհանրապես, Բաշար Ալ-Ասադը վայելում է երկրի քրիստոնյաների աջակացությունն ու համակրանքը. Վերջիններս զգալի ազատություններից են օգտվում: Սակայն Մերձավոր Արեւելքում ցանկացած անկայունության դեպքում առաջին հերթին տուժում են ինչն քրիստոնյաները, որոնց դիրքերը դառնում են խոցելի: Ներկայում, պայմանավորված տնտեսական եւ քաղաքական պատճառներով, Մերձավոր Արեւելքում, այդ թվում՝ Սիրիայում, քրիստոնյաների, նաեւ՝ հայերի շրջանում մեծանում է արտագաղթը: Անեն պարագայում, Սիրիայում իշխանափխությունն ամենեւին ձեռնտու չէ հայերին, առավել եւս եթե այդ երկրում իշխանության գան կրոնաքաղաքական ուժեր:

Սիրիան իր պատմության ընթացքում, մասնավորապես երկրորդ աշխարհամարտից հետո, բազմաթիվ ճգնաժամեր է հաղթահարել: Արդյո՞ք Սիրիայի ներկա վարչակարգը կկարողանա հաղթահարել հերթական ճգնաժամը, ցույց կտա ժամանակը:

ԱՐԴՅՈ՞Ք ՉԻՆԱՍՏԱՆԸ ՀԱԶՈՐԴՆ Է Ֆրենսիս Ֆուկույամա

Արդյո՞ք Մերձավոր Արեւելքում ծավալվող բողոքի գործողությունները նմանատիպ շարժում առաջ կրերեն նաեւ Չինաստանում, թէ՝ այդ երկրի միջին խավն ավելի շատ հետաքրքրված է ոչ թե քաղաքական, այլ նյութական արժեքներով:

Վերջին ամիսների ընթացքում ժողովրդական հուզումները տապալեցին Թունիսի եւ Եգիպտոսի վարչակարգերը, քաղաքացիական պատերազմի պատճառ դարձան Լիբիայում եւ լարված իրավիճակ առաջացրին Սիջին Արեւելքի այլ պետություններում: Նրանք նաեւ շատ մարդկանց մոտ հարց առաջացրին՝ արդյո՞ք վերելք ապրող գերտերություն հանդիսացող Չինաստանում հնարավոր են նման զարգացումներ:

Պեկինի կոմունիստական կառավարությունն ակնհայտորեն անհանգստացած է: Նա սահմանափակել է վերջին իրադարձությունների մասին լրատվության տարածումը եւ սկսել է ճնշումներ գործադրել ժողովրդավարական շարժման ակտիվիստների եւ օտարերկրյա լրագրողների նկատմամբ: Իր հերթին, Չինաստանի նախագահ Չու Չին Թաոն կոչ է արել ավելի ամրապնդել ինտերնետը վերահսկող այն քավականաչափ կատարելագործված գործիքարանը, որը հաճախ անվանում են «Մեծ արգելապատճեց»:

Ոչ մի գիտնական կամ վերլուծաբան չէր կանխատեսել արաբական աշխարհում այժմ ընթացող ժողովրդական հուզումների կոնկրետ ժամանակը կամ տարածվածության աստիճանը: Ինչու դրանք հանկարծակի սկսվեցին 2011թ., այս խնդրի պատասխանը, այն էլ՝ գուցե ոչ լիարժեք, հնարավոր կինի ստանալ միայն որոշ ժամանակ անցնելուց հետո:

Սակայն սա չի նշանակում, որ մենք չենք կարող խորիել սոցիալական հեղափոխությունների մասին ավելի համակարգված ձեւով: Նույնիսկ անկանխատեսելի դեպքերը տեղի են ունենում որոշակի համատեքստում, եւ այդ առումով ներկայումս Չինաստանում եւ Սիջին Արեւելքում ստեղծվել է իրարից արմատապես տարբերվող իրավիճակ: Տեղեկույթի մեջ մասը հիմք է տալիս ենթադրելու, որ Չինաստանը, գոնե առայժմ, քավականաչափ ապահովագրված է աշխարհի այլ վայրերում տարածվող ժողովրդավարական ալիքից:

Միջին Արեւելքի ներկան եւ Զինաստանի ապագան հասկանալու համար, թերեւս, առավել համապատասխան տեսությունը հանգուցյալ Սամյուել Յանթինգտոնինն է, որի 1968թ. իրատարակված եւ դասական համարվող «Քաղաքական կարգը փոփոխվող հասարակություններում» աշխատությունում ներկայացված է «զարգացնան ճեղքածքի» տեսությունը:

Յետազոտելով 1950–1960-ական թվականներին զարգացող աշխարհում մեծ տարածում ստացած քաղաքական անկայունության բարձր մակարդակը՝ Յանթինգտոնը նկատել է, որ տնտեսական եւ սոցիալական զարգացման աճող մակարդակը հաճախ հանգեցնում է դավադրությունների, հեղափոխությունների կամ ռազմական հեղաշրջումների: Յանթինգտոնի համաձայն, այս երեւույթը կարելի է բացատրել նոր մորթիլիզացված, կրթված եւ տնտեսական լծակներ ստացած մարդկանց եւ գործող քաղաքական համակարգի միջեւ առկա ճեղքածքով, այսինքն՝ քաղաքական կյանքին մասնակցության նրանց հույսերի եւ այդ զանգվածին քաղաքական կյանքում ընդիհանրապես ոչ մի կամ շատ սակավ դերակատարություն ընձեռող ինստիտուտների միջեւ առկա անդունով: Յանթինգտոնը նշում է, որ նմանատիպ հասարակություններում գործող քաղաքական համակարգի դեմ ուղղված հարձակումները հազվադեպ են ուղղորդվում առավել չքավոր խավի կողմից, փոխարենը դրանց առաջնորդն է դառնում աստիճանաբար ամրապնդվող միջին խավը, որը գնալով ավելի է հիասքափվում քաղաքական եւ տնտեսական հնարավորությունների պակասից:

Յանթինգտոնի այս նկատառումները լիովին կիրառելի են Թունիսի եւ Եգիպտոսի դեպքերում: Երկու պետություններն էլ վերջին մի քանի տասնամյակների ընթացքում զգալի սոցիալական առաջընթաց են արձանագրել: Թունիսում եւ Եգիպտոսում բողոքի շարժումն առաջնորդում էին կրթված, ժամանակակից լիովին կիրառելի են Թունիսի տիրապետող միջին խավի երիտասարդ ներկայացուցիչները, որոնք բոլորին ներկայացնում էին սեփական հիասքափությունը ձեւավորված հասարակությունից, որը հնարավորություն չէր տալիս արտահայտել սեփական կարծիքը, երկրի դեկավարներին պատասխանատվության ենթակել կոռուպցիայի եւ ոչ կոմպետենտ գործողությունների համար, կամ առանց քաղաքական շրջանակներում կապեր ունենալու համապատասխան աշխատանք գտնել: Յանթինգտոնը շեշտում է քաղաքական կյանքին մասնակցելու ցանկություն ունեցող սոցիալական նոր խմբերի ապակայունացնող ներուժը: Նախկինում մարդկանց մորթիլիզացնելու գործում զգալի դերակատարություն ունեին թերթերն ու ռադիոն, այսօր

նրանց գործողությունների են մղում բջջային հեռախոսները, facebook-ը եւ twitter-ը: Սակայն արդյո՞ք այս իրադարձությունները հնարավորություն են տալիս կանխատեսումներ անել Զինաստանում անկայունության տարածման հավանականության մասին:

Ակնհայտ է, որ ինչպես Միջին Արեւելքում, Զինաստանում եւս առկա է սոցիալական բավականին մեծ դժգոհություն: Թումիսում ժողովրդական հուզումների պատճառ դարձավ Մոհամեդ Բուազիզի ինքնահրկիգումը, որի բանջարեղենի առեւտրի համար նախատեսված սայլակը մի քանի անգամ բռնագրավվել էր իշխանությունների կողմից: Բուազիզին փորձել էր դիմել ոստիկանություն՝ բողոքելու այդ գործողությունների դեմ, սակայն ոստիկանությունում նրան ապտակել եւ անարգել էին: Այս երեւույթը բնորոշ է այն բոլոր վարչակարգերին, որտեղ բացակայում են օրենքի իշխանությունը եւ հանրային վերահսկողությունը: Իշխանությունները պարբերաբար վիրավորում են շարքային քաղաքացիների արժանապատվությունը եւ խախտում նրանց իրավունքները: Նման վարվելակերպը լուրջ դժգոհության պատճառ է դառնում ցանկացած մշակույթում:

Այս իրավիճակը լրջագույն խնդիր է նաեւ Զինաստանի համար: Զիան Թոնզ համալսարանի կողմից վերջերս իրապարակված զեկույցի համաձայն՝ 2010թ. Զինաստանում 72 սոցիալական բնույթ կրող «պատահարներ են» տեղի ունեցել, ինչը 20 տոկոսով գերազանցում է 2009թ. ցուցանիշը:

Ժամանակակից Զինաստանում քաղաքացիների արժանապատվության վիրավորնան առավել բնորոշ դեպքերից է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ գյուղացիների կամ աղքատ բանվորների հողի եւ ունեցվածքի խլումը խոշոր բիզնես ծրագրի իրականացման նպատակով: Հաճախակի են նաեւ այն դեպքերը, երբ մասնավոր ընկերություններն իրենց թափոններով աղտոտում են քաղաքի խմելու ջրի համակարգը եւ որեւէ պատասխանատվության չեն ենթարկվում, քանի որ կուսակցության տեղական կազմակերպության ղեկավարն անձնական շահույթ է ստանում այդ ընկերությունից: Զնայած կոռուպցիան Զինաստանում չի հասել այնպիսի գիշատիչ ծավալների, ինչպիսին առկա է Միջին Արեւելքի եւ Աֆրիկայի որոշ երկրներում, այնուամենայնիվ, այն ունի համընդգրկուն բնույթ:

Բացի այդ, Զինաստանում առկա է անհավասարության աստիճանաբար ահագնացող խնդիր: Զինաստանի նշանակալի տնտեսական աճի արդյունքներն անհավասարաշափ են բաշխվել՝ իիմնականում ուղղվելով

ափամերձ շրջաններ՝ իրենց հետեւում թողմելով գյուղական բազմաթիվ տարածքներ: Չինաստանում Չինի ինդեքսի ցուցանիշը, որով չափվում է հասարակության մեջ եկամուտների բաշխման անհավասարությունը, գրեթե հասել է Լատինական Ամերիկայում առկա ցուցանիշներին:

Չանքինգունի համաձայն, այնուամենայնիվ, հեղափոխություններն իրականացնում են ոչ թե աղքատները, այլ շարժումներ միջին խավի ներկայացուցիչները, որոնց ձգտումները ճշշփում են, եւ պետք է նշել, որ Չինաստանում նման մարդկանց թիվը բավականին շատ է: Սակայն ի տարբերություն Միջին Արեւելքի իրենց բախտակիցների, նրանք օգուտներ են քաղել զարգացող տնտեսությունից, եւ կառավարությունն իր հիմնական ջանքերն ուղղում է հենց այդ խավի համար աշխատատեղեր ստեղծելուն: Որքանով որ հնարավոր է տեղեկություններ ստանալ Չինաստանի հասարակական կարծիքի մասին սոցիոլոգիական հետազոտությունների միջոցով, Չինաստանի բնակչության մի զգալի հատված գտնում է, որ վերջին տարիների ընթացքում տնտեսական առումով նրանց կենսամակարդակը զգալիորեն բարձրացել է: Չինացիների մեծ մասը նաեւ գտնում է, որ ժողովրդավարությունը կառավարման լավագույն ձեւն է, սակայն նրանք կարծում են, որ Չինաստանն արդեն ժողովրդավարական պետություն է, եւ բացահայտ նշում են, որ բավարարված են առկա իրավիճակով:

Փաստն այն է, որ Չինաստանում ավտորիտարիզմը շատ ավելի բարձր որակ ունի, քան Միջին Արեւելքում: Չնայած Չինաստանի կառավարությունը ֆորմալ տեսակետից ընտրությունների միջոցով հաշվետու չէ սեփական ժողովրդին, այն բավականին ուշադիր հետեւում է ժողովրդական դգործություններին եւ հաճախ դրանց արձագանքում է ոչ թե ճնշելով, այլ սիրաշահելով:

Չինաստանում իշխանությանը բնորոշ հաջորդ յուրահատկությունը բարձրագույն պաշտոնատար անձանց փոփոխումն է: Արաբական առաջնորդները, օրինակ՝ Թունիսի նախագահ Բեն Ալին, Եգիպտոսի նախագահ Սուլթանը եւ Լիբիայի առաջնորդ, գնդապետ Քաղաքին չգիտեին, թե երբ են հեռանալու իշխանությունից՝ բարձրագույն պաշտոնը զբաղեցնելով համապատասխանաբար 23, 30 եւ 41 տարի: Մասյից հետո Չինաստանի բարձրագույն դեկավարությունը փոխվում է յուրաքանչյուր տասը տարին մեկ: Գործող նախագահը պաշտոնը թողնելու է 2012թ.:

Չինաստանի կառավարությունն ավելի խելացի եւ միեւնույն ժամանակ կոչտ դիրքորոշում ունի ճնշումների հարցում: Հստակ սպառնալիքի դեպքում իշխանություններն առաջին հերթին արգելում են արեւմտյան սոցիալական ցանցերի տարածումը: Արգելված են facebook-ն

ու twitter-ը, ինտերնետ կայքերի ու չինական սոցիալական ցանցերի բովանդակությունը վերահսկվում է բազմաթիվ գրաքննիչների կողմից:

Չինաստանում եւ Միջին Արեւելքում ստեղծված իրավիճակի հաջորդ կարեւոր տարրերությունը չինական զինված ուժերի բնույթն է: Ժողովրդական հուզումներին դիմագրավող ավտորիտար վարչակարգերի ճակատագիրը վերջին հաշվով կախված է զինված ուժերի, ոստիկանության եւ հատուկ ծառայությունների հավատարմությունից:

Չինաստանում բանակը հսկայական եւ ինքնուրույն կազմակերպություն է՝ խիստ ընդգծված տնտեսական շահերով եւ շահագրգռված ներկայիս ստատուս քվոյի պահպաննամբ:

Չինաստանի զինված ուժերն իրենց միշտ համարել են չինական ազգայնականության պահպաններ՝ ծեւավորելով 20-րդ դարի այլընտրանքային պատմություն, համաձայն որի՝ խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում ընթացող պատերազմական գործողություններում եւ ժամանակակից Չինաստանի վերելքում բանակը կենտրոնական դեր է խաղացել: Գրեթե ամհավանական է, որ Չինաստանի բանակն աջակցություն ցուցաբերի ժողովրդական հուզումներին:

Յիմնական եզրակացությունն այն է, որ Չինաստանում մոտ ապագայում Միջին Արեւելքում ընթացող իրադարձությունների կրկնություն չի սպասվում: Սակայն Չինաստանը եւս կարող է որոշակի խնդիրների առջեւ կանգնել: 1978թ. մեկնարկած տնտեսական բարեփոխումներից ի վեր Չինաստանում տնտեսական անկում չի արձանագրվել: Սակայն եթե անշարժ գույքի շուկայում ծեւավորված փուչիկը պայթի եւ տասնյակ միլիոնավոր մարդիկ կորցնեն իրենց աշխատատեղերը, տնտեսության ծիչտ դեկավարման վրա հենվող կառավարության լեգիտիմությունը լուրջ կասկածի տակ կդրվի:

Ավելին, կարող է իրողություն դառնալ նաեւ Յանթինգտոնի առաջքաշած միջին խավի չիրականացած սպասումների սենարը: Շնայած ներկայումս Չինաստանում ցածր որակավորում ունեցող բանվորական ուժի պակաս կա, քուեցների շրջանավարտների թիվն անընդհատ աճում է: 2011թ. սկսած՝ յուրաքանչյուր տարի չինական համալսարանների շրջանավարտների թիվը կազմի շուրջ յոթ միլիոն, մինչդեռ 1998թ. այդ թիվը մեկ միլիոնից պակաս էր: Շրջանավարտների մեծ մասը փորձում է սեփական ինքնագնահատականին համարժեք աշխատանք գտնել: Մոդեռնիզացիայի փուլում գտնվող վարչակարգերի համար մի քանի միլիոն համալսարանական կրթությամբ գործազուրկները շատ ավելի վտանգավոր են, քան հարյուր միլիոնավոր աղքատ գյուղացիները:

Չինաստանում առկա է նաեւ «վատ կայսեր» խնդիրը: Դարեր շարու-

նակ Զինաստանի պատմական ձեռքբերումը բարձրորակ, կենտրոնացված բյուրոկրատական կառավարության ձեւավորումն էր: Եթե ավտորիտար կառավարիչները խելացի են եւ ինչ-որ չափով պատասխանատու, երկիրը կարող է ճիշտ ուղղով զարգանալ: Իսկապես, որոշումների ընդունման նման մեխանիզմը հաճախ ավելի արդյունավետ է, քան ժողովրդավարական համակարգը: Սակայն ոչ մի երաշխիք չկա, որ համակարգը միշտ լավ դեկավարներ կծեւավորի, եւ այդ դեպքում օրենքի իշխանության եւ ընտրական մեխանիզմների բացակայության պայմաններում անհնար է ազատվել «վատ կայսրից»: Զինաստանում վերջին «վատ կայսրը» Մատն էր: Անհնար է գուշակել, թե ապագայում ինչ բռնապետ կամ կոռումպացված կլեպտոկրատ է սպասվում Զինաստանին:

Զինաստանում ճշգրիտ հաշվարկների չենթարկվող հիմնական ուժը միջին խավն է, որը մինչ օրս համաձայնվել է քաղաքական ազատությունները փոխարինել ավելացող եկամուտներով եւ կայուն իրավիճակով: Սակայն ինչ-որ պահի այս իրավիճակը կարող է փոխվել: Վարչակարգն այլեւս չի կարող համապատասխան ապրանքներ եւ ծառայություններ մատակարարել, կամ էլ ժողովրդի արժանապատվությանը հասցվող անարգանքն այլեւս անտանելի կլինի: Մենք չենք կարող ձեւացնել, թե ի վիճակի ենք կանխատեսել դեպքերի նման զարգացման կոնկրետ ժամանակը, սակայն այդ ընթացքը, ինչպես նշում է Հանթինգտոնը, անխօնական կապված է մոդեռնիզացիայի տրամաբանության հետ:

Wall Street Journal

Մարտ, 2011թ.

Անգլերենից թարգմանեց
Քենիամին Պողոսյանը
(Աերկայացվում է որոշ կրծատումներով)

ՊԱՐՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1789 թվականին աշխարհը կտրականապես (եւ, ինչպես պարզվեց ավելի ուշ, անշրջելիորեն) այլ դարձավ: Լոկալ ազգային իրադարձությունը՝ Ֆրանսիական հեղափոխությունը, նորացման համատարած ազդանշանի վերածվեց:

«Ֆրանսիական հեղափոխությունն այլ բան չէր, քան մասնատման այն պատմական գործընթացի զագարնակետը, որի արմատները ձգվում էին դեպի այնպիսի դոկտրինների հիմունքները, ինչպիսիք են նոմինալիզմը, կրոնական այլախոհությունը, գիտական ռացիոնալիզմը, եւ այն խմբերի, ինստիտուտների ու անվիճելի ծշմարտությունների փլուզումը, որոնք հիմնարար էին Միջին դարերում», – փաստում էր Ռոբերտ Նիսրետը: Սակայն առողջ բանականությունը եւ սովորական կարգը չին պատրաստվում հանձնվել առանց մարտի: Նրանց պատասխան քայլը դարձավ կոնսերվատիզմը (պահպանողականությունը): Ինչպես գրում էր բրիտանացի պահպանողական լորդ Սեսիլը, բնական պահպանողականությունը գոյություն է ունեցել միշտ, բայց մինչեւ 1789թ. «կոնսերվատիզմի գիտակցարար մշակված ուսմունք հիշեցնող» ոչինչ չի եղել:

Ծուկայի անտեսանելի ձեռքով շնչահեղծ արվող եւ սոցիալիստական հավասարության ու երբայրության թոկերով կապակած ՀՀ դարը, որը պատերազմների եւ հեղափոխությունների ճանապարհով դեպի «լուսավոր ապագա» էր գլորվում մերք՝ իբրեւ լիբերալիզմ, մերք՝ իբրեւ սոցիալիզմ, անդորր ու պաշտպանություն էր փնտրում պահպանողական գաղափարախոսության մեջ, որն ի վիճակի էր դիմակայել հասարակության կտրական եւ կործանարար փոփոխություններին: Սամյուել Ջանթինգտոնը «Պահպանողականությունը՝ որպես գաղափարախոսություն» (1957թ.) հոդվածում ներկայացրել է հետեւյալ պատկերը. «Պահպանողականությունը գաղափարների համակարգ է, որն օգտագործվում է ստեղծված ցանկացած կարգի պաշտպանության համար, անկախ տեղից եւ ժամանակից, նրա բնույթին ու գոյությանը նետված ցանկացած հիմնարար մարտահրավերից՝ անկախ այն բանից, թե որ ծամբարից է այն բխում: Դա չի նշանակում, թե պահպանողականությունը հակադրվում է բոլոր փոփոխություններին: Իրականում, հասարակության հիմնարար տարրերը պահպանելու համար, հարկ է լինում համաձայնել փոփոխությունների երկրորդական հարցերում: Ոչ ոք չի փառարանի պահպանողական գաղափարախոսությունը, եթե բավարարվածություն չի զգում ստեղծված կարգից եւ պատրաստ չէ այն պաշտպանել ցանկացած լուրջ

մարտահրավերից»: Ինքնաբնութագիր, որը չափազանց հարմար էր պահպանողականությունը մեղադրելու այն երեք մեղքերի մեջ, որոնք չեր էլ ենթադրում գործել:

Պահպանողականության քննադատությունը

Ամենահամար մեղադրողներից մեկը դարձավ փայլուն լիբերալ ֆրիդրիխ Շայեկը: Նրա կարծիքով՝ պահպանողականությունն իր բնույթով հասարակության զարգացման ոչ մի նպատակ չի կարող առաջարկել, քանի որ ի վիճակի է միայն հակագրել ընթացիկ սոցիալական եւ տնտեսական տեղաշարժերին, միտումներին, գաղափարախոսությունների եւ իդեալների փոփոխմանը: Բայց քանի որ «առաջընթացը չես կանգնեցնի», պահպանողականությանը մնում է միայն ավելի կամ պակաս չափով դանդաղեցնել իր համար անցանկալի գործընթացները: Եվ, ինչպես թվում է Շայեկին, քանի որ պահպանողականությունը զարգացման ոչ մի ուղղություն չի առաջարկում (ընթացիկի համեմատ), նրան մշտապես վիճակված է «քարշ գալ այն ճանապարհով, ինչը նրան պարտադրվում է դրսից»:

Դա հավերժ «երկրորդ համարի» պատիճն է: Ինչը բավական վիրավորական է գաղափարների այն ամբողջության համար, որոնց նշանի տակ անցավ XX դարը եւ որոնք բարեհաջող հաղորդվեցին ներկա դարին: Այստեղ կարելի է հիշատակել XX դարը հռչակած թեկուզեւ այնպիսի պահպանողական հեղինակների, ինչպիսիք են Լեո Շորաուսը, Երիկ Ֆեգելինը, Մայքլ Օութշորը, Ռասըլ Քերքը, Իրվինգ Քրիսթոլը, Վերը մեջքերված Սամյուէլ Շանթինգտոնը, Ռոբերտ Քեյգանը, Ֆրենսիս Ֆուլկույաման, Փաթրիկ Բյուլեննենը, Ռոջեր Սքրաբոնը եւ այլք, ինչպես նաև ազդեցիկ պահպանողական շարժումները, որոնք ընդգրկում են մտածողների եւ քաղաքական գործիչների ամբողջ սերունդներ, օրինակ՝ պահպանողական հեղափոխությունը Գերմանիայում կամ անգլո-սաքսոնական նեոլինսերվասիզմը:

Բայց Շայեկը շարունակում էր հարձակումը՝ օգտագործելով էպիտեներ արդեն հույզերի ոլորտից. պահպանողականությունը, որը խեղճուկուակ է ցանկացած նորարարության համեմատ, անշուշտ, զանգվածային ընկալման մեջ պետք է պարտվի իր հավերժական հակառակորդին՝ լիբերալիզմին, որը համարձակ ու գլուխը բարձր է ընդունում փոփոխությունների զովացմող քամին: Պահպանողականները չեն հավատում «ինքնաբուխ գործող ծզգրտող ուժերին, այնինչ լիբերալին այդ հավատը ստիպում է լավատեսորեն ընդունել փոփոխությունները, եթե անգամ նա չգիտի, թե ինչ ձեւով կիրականանա անհրաժեշտ ծզգրտունը»: Պահպանողականը հանգիստ է միայն այն ժամանակ, երբ զգում է, որ «փոփոխություններին հետեւում եւ հսկում է մի ինչ-որ բարձրագույն իմաստուն

ուժ, միայն երբ գիտի, որ մի ինչ-որ իշխանական ինստիտուցիա պարտավոր է ապահովել «փոփոխությունների «կարգավորված ընթացք»։ Այսինքն՝ պահպանողականները, ըստ Էռլյան, ուժեղ պետության կողմնակիցներ են։ Իսկ այստեղից արդեն հեռու չէ պահպանողականության «հարցի վերջնական լուծումը»։ չէ՞ որ մենք բոլորս գիտենք, թե XX դարում ինչի վերածվեցին ուժեղ պետությունները։ նացիզմը եւ տոտալիտարիզմն այդ կայուն բառակապակցության ուղղակի սպառողներն են։ Եվս մեկ մեղք, որը վերագրում են պահպանողականությանը նրա քննադատները։

Պահպանողական դիրքորոշումը, ըստ Յայեկի, հակասում է նաեւ արդիականության իիմնական սկզբունքներին՝ բոլոր քաղաքացիների հավասարությանը եւ ունիկալ արժեքին։ Յեղինակը կարծում է, որ ցանկացած հասարակությունում գոյություն ունեն «ավելի բարձր կարգի մարդիկ՝ ժառանգված սկզբունքների եւ արժեքների կրողներ», եւ իշխանությունը պետք է պաշտպանի հենց այս հիերարխիան։ Բացի այդ, պահպանողականները, հասկանալով, որ ցանկացած փոփոխության աղբյուրն ու պատճառը նոր գաղափարներն են, զգուշանում եւ, միեւնույն ժամանակ, ատում են ցանկացած նոր գաղափար, ընդհանրապես՝ հանրային դիսկուրսներում պարունակվող ամեն նոր բան։ Պահպանողականությունը հետագանաց (ռետրոգրադ) է։

Թվում է, թե պահպանողականության այսօրինակ քննադատությունը բավական համոզիչ է, թե այն հարվածում է նրա թույլ տեղերին՝ դրանով իսկ առաջ չըերելով ցնցումներ եւ թերասացության զգացողություն նրա հիմնային սկզբունքների առնչությամբ։ Բայց դա թվացյալ համոզվածություն է։ Պարզապես այն պատճառով, որ պահպանողականության քննադատները, որպես կանոն, մարտնչում են նրա շտկված կերպարի հետ։ Նման հակառակորդին, ինչպես նրանց է թվում, ավելի հեշտ է հաղթահարելը։

Որպեսզի համոզվենք, թե քննադատների համար սովորական է պահպանողականության կերպարը պարզեցնելը, բավական է անդրադառնալ թեկուզեւ պահպանողականության եւ ավանդապաշտության (տրադիցիոնալիզմ) սահմանազատմանը, որն առաջարկել է դեռ Կառլ Մանհեյմը «Պահպանողական միտք» աշխատությունում (1925թ.)։ Կա պահպանողականություն՝ որպես մտածողության եղանակ կամ ոճ, ռեակտիվ փոփոխվող սոցիալական համատեքստի հանրեալ, եւ կա ավանդապաշտություն՝ որպես անմիջական հոգեբանական հակազդեցություն այստեղ եւ հիմա կատարվող կոնկրետ փոփոխություններին։ Պահպանողականությունը հենվում է սոցիալական պատմության վրա, իսկ ավանդապաշտությունն անմիջական հակազդեցությունն է նորամուծությանը, որը հենվում է սոսկ մենքալ սովորույթների եւ կայունության ցանկության վրա։

Տասը հատկություն

Ի՞նչ է, ուրեմն, իսկական պահպանողականությունը: Ուստական պահպանողական ամենավառ մտածողներից մեկը՝ Լեոնիդ Իոնինը, առաջարկել է տասը կետ, որոնք կարող են ավելի հստակ պատկերացում տալ պահպանողականության էության մասին:

Պահպանողականության առաջին եւ գլխավոր հատկությունն անցյալի եւ ներկայի կապվածության մասին դրույթն է: Եվ սա նույնը չէ, ինչ վախը փոփոխությունների նկատմամբ: «Պահպանելով եւ վերարտադրելով անցյալի փորձը, խոչընդոտելով ավանդույթների եւ բազային քաղաքակրթական ու մշակութային հմտությունների մոռացությանը, դրանով իսկ հարկադրելով «անցյալին ապրել ներկայում՝ պահպանողականությունը թույլ չի տալիս, որ կտրվի պատմության թելը, թույլ չի տալիս, որ կտրվի «ժամանակի կապը»: Իոնինը «դրոշմում» է: «Պահպանողականությունը պատմության պահապանն է»: Ինչպես ասում էր գերմանական պահպանողականության առանցքային ներկայացուցիչներից մեկը՝ Արմին Մոլերը, «պահպանողական լինել՝ չի նշանակում կառչել երեկվա օրից, այլ նշանակում է ապրել նրանով, ինչը նշանակալի է միշտ»:

Պահպանողականության երկրորդ կարեւոր հատկությունը, ըստ Իոնինի, «կյանքի խորհուրդները հարգելն է, ինչը մարմնավորվում է հեղինակությունների ճանաչմամբ եւ աջակցմամբ, լինեն դրանք Աստված, բնությունը, պատմությունը, թե պետությունը: Ուսցինալիզմը՝ պրոգրեսիստական եւ հեղափոխական գաղափարախոսությունների հիմքն ու շարժիչ ուժը, ինչպես հայտնի է, գաղտնազերծում է աշխարհը, մերկացնում հեղինակություններին՝ գաղտնիքներ չքողնելով, դրանով իսկ աղքատացնելով կյանքը, նվազեցնելով նրա հոգեւոր եւ հուզական մակարդակը, մարդուն մեն-մենակ թողնելով անտարբեր արստրակտ «ուժերի» հետ: Այստեղից էլ այնուհետև առաջ է գալիս կյանքի եւ բնության համատարած վերածեւման կիրքը: Պահպանողականությունը, ընդհակառակը, ձգտում է անաղարտ պահել սոցիալական երեւույթների մի-որ սրբագրության միջուկ»:

Երրորդ. պահպանողականությունը կարգը, կայունությունը, ժառանգականությունը, հեղինակությունը, ազատությունը հաստատում է հենց օրինականության հիման վրա: Շեշտը դնելով «սոցիալական կյանքի հանդեպ վստահության» վրա՝ պահպանողականությունը փառաբանում է օրինապաշտությունը եւ քաղաքացիական պատասխանատվությունը:

Չորրորդ. պահպանողականությունը հանդիսանում է հասարակական ցանկացած ախտի հեշտ բացատրության եւ անցավ բուժման հավակնող

ունիվերսալ գաղափարների հակառակորդը, սկզբից եւեթ ուղղված լինելով ինչպես կոնկրետ նարդու, «պատմական անհատների», այնպես էլ՝ երկրների, մշակույթների եւ քաղաքակրթությունների հատուկ, ուրույն արժեքներին: Արդի գաղափարախոսությունները (նկատի է առնվում XX դարը), ինչպես երբեք, ջանում են համահավասարեցմել նարդկային անձնավորություններին, համահարթել մշակութային տարբերությունները երկրագնդի բոլոր մասերում: Մեղավորը եւ ամբողջատիրական գաղափարախոսություններն են՝ իրենց համընդհանուր համահավասարեցմամբ, եւ «ֆորմալ» դեմոկրատիա ու զանգվածային մշակույթ ծնած լիբերալ պրոգրեսիզմը: Ի դեպ, զանգվածայնացումը արդիականությանը բնորոշ երեւույթ է, որը գերգաղափարախոսական բնույթ ունի, եւ դրան գիտակցաբար հակադրվում է, թերեւս, միայն պահպանողականությունը: Պահպանողականությունն անհատականության պաշտպանն է:

Յինգերորդ հասարակությունը պահպանողականի համար արհեստական մեխանիկական ագրեգատ չէ եւ ոչ էլ ծննդյանք կամ միգրացիոն հակումներով պայմանավորված՝ անհատների պատահական կուտակում, որոնց «էգոիզմները» փոխադարձաբար հավասարակշռում են միմյանց, այլ օրգանական ամբողջություն՝ անդամների հայտնի համաշափությամբ, որը կարավարվում եւ կարգավորվում է պետության կողմից: Վերջինն իր մեջ մարմնավորում է հասարակությունը եւ արտահայտում նրա խմբերի ու դասերի եւ իր բոլոր քաղաքացիների շահերը: Պետությունն անհատին «ազատություն է տրամադրում, եւ ինքն էլ սահմանափակում է այն: Այն տրամադրում եւ կազմակերպում է սեփականության իրավունքը: Մեփականությունն ազատության գործառույթ է, եւ ոչ թե ազատությունն է սեփականության գործառույթ, ինչպես կարծում են լիբերալները: Ուստի, պետությունը համարվում է քաղաքացիական հասարակության աղբյուրը:

Վեցերորդ պահպանողականությունը դրական գաղափարախոսություն է: Ցանկացած պրոգրեսիստական գաղափարախոսություն հիմնված է այս բանի վրա, որ նորը հնից լավ է, նշանակում է՝ հինը պետք է դեն նետվի կամ ոչնչացվի: «Պահպանողականությունը, – նշում է Լեոնիդ Իոնինը, – մղում է չտրվել այդ պրոգրեսիստական պատրանքին: Դաճախ խոսում եւ գրում են, թե պահպանողականը հնի պաշտպանն է: Եվ դա բավական է լինում, որպեսզի մեղադրեն պահպանողականին եւ մերժեն նրա փաստարկները: Գիտակցության մի ինչ-որ անհերեթ շեղման պատճառով կարծում են, որ նորն այդպիսին է հենց նրա համար, որ ավելի նոր, լավ եւ արժեքավոր է հնից: Սա մարդկային հոգերանության համեմատաբար վերջերս արված ծեռքբերում է՝ կապված հոսքագժի վրա դրոշմպող, մեկը մյուսին նման իրերի արդի զանգվածային արտադրության հետ: Նոր իրի մասին նախապես կարելի է ասել, որ այն հնից

ավելի լավն է միայն այն պարագայում, եթե դրանք բացարձակապես միանման իրեր են: Իսկ եթե դրանք տարբեր իրեր են, ապա դրանց մասին հարկ է դատել որպես առումով, այլ ոչ թե ժամանակի ծեւական չափանիշով: Այլ խոսքով, հնի համեմատ նորի՝ ինքնըստինքյան հասկացվող գերազանցությունն արդի նախապաշարնունք է: Յինք կարող է ավելի լավը լինել նորից: Ուրեմն, պահպանողականությունը կողմնորոշված է ոչ թե անցյալը ժխտելուն, այլ պահպանելուն: Սա նաեւ նորի ժխտում չի ենթադրում, այլ, ավելի շուտ, հավերժի հաստատում»:

Յոթերորդ. պահպանողականությունը պասիվ չէ, բայց ակտիվ է: Մի որեւէ արժեքավոր եւ ժամանակով ստուգված բան պահպանելու համար գործողություններ են անհրաժեշտ: Այդ գործողությունները (նորամուծություններ եւ ռեֆորմներ) պետք է պատճեշեն եւ խանգարեն ողջ հասարակության համար վտանգավոր սոցիալական բեկումներին ու կտրուկ հեղափոխական փոխակերպումներին: Դասարակության եւ պետական իշխանության պահպությունն, ընդհակառակը, հանգեցնում է հեղափոխությունների:

Ութերորդ. պահպանողականներն իրավունքի պաշտպաններն են: Նրանք, գրում է Իոնինը, «ինչպես վերի, այնպես էլ վարի՝ մասսաների դիկտատորայի հակառակորդն են: Այս իմաստով, պահպանողականը քաղաքական առումով մշտապես կենտրոնում է»:

Ենթերորդ. պահպանողականությունն արդարության ջատագովն է: Արդի հասարակությունում սոցիալական արդարությունը գոյություն ունի եւ իրագործվում է պետության կարգավորող եւ բաշխող գործառույթով, որին նպաստում են հասարակության բոլոր շերտերն ու խմբերը: Իոնինն առաջարկում է դա անվանել «սոցիալական պահպանողականություն»:

Տասներորդ. պահպանողականությունը միշտ արդիական է, քանի որ ամեն անգամ ծնունդ է առնում ակտուալ հասարակական իրավիճակից: Պահպանողականությունը նաեւ վերկուսակցական է: Այն, ինչում նրան մեղադրում են, իրականում նրա հաջողության մարտավարությունն է: Որպես քաղաքական գաղափարախոսություն՝ պահպանողականությունը կարող է դրսեւորվել տարբեր կուսակցությունների գործունեությունում: Այն ճկուն է: Նրա համար ավելի կարեւոր է, որ այս կամ այն կուսակցությունն ընդունի պահպանողական որոշումներ, քան անվերապահորեն նույնացվի այն կուսակցության հետ, որն իրեն պահպանողական կանվանի:

«Երսպերտ»,
N 1, հունվար, 2011

ԲՈՎԱՆԴԱԿՈՒՅՑՆԵՐՆ

Գագիկ Տերտերյան

ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՉ	1
Սուրեն Սարյան	
ՔԱՂԱՔՎԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ	
ԱՐԴԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ	5
Հայկ Գաբրիելյան	
«ՔՐՈԱԿԱՆ ՀԱՐՑԸ» ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ	10
Արտաշես Տեր-Հարությունյան	
ԼԻԲԻԱԿԱՆ ԵԳԻԱԺԱՄԸ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՏԱՐԱԾՈՒԹԱՆԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ	16
Սեւակ Սարուխանյան	
ԻՐԱՆԸ, ՇԻԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՃՈՒՄ	21
Արաքս Փաշայան	
ՍԻՐԻԱՆ ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎՏԱՆԳԻ ԱՌՁԵՎ	26
Ֆրենսիս Ֆուկույանա	
ԱՐԴՅՈՒՅԹ ԶԻՆԱՍՏԱՆԸ ՀԱԶՈՐԴՆ Է	33
ՊԱՐՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	39

*Ծապիկին պատկերված է
Սարսանգի ջրամբարը
(Արցախ)*

«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Դեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 3,5 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տպատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ O1U 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: